

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

№ 3(45)
2024

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Գրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի: Журнал «Вестник Ереванского университета. Международные отношения, Политология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».

Three issues of "Journal of Yerevan University. International Relations, Political Science" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Редакционная коллегия:

Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Պետրոսյան Գեղամ (պ.գ.դ., պրոֆ.,

gegham.petrosyan@ysu.am)

Петросян Гегам (д.и.н., проф.)

Petrosyan Gegham (Sc. D. in History, Professor)

Աղունյան Կատերինա (պատ. քաղաքագիտ.,

ք.գ.թ., դոցենտ, katya.altunyan@ysu.am)

Алтунян Катерина (отв. секретарь, к.пол.н., доц.)

Altunyan Katerina (Executive Secretary, PhD in Political Science, Associate Professor)

Ագլյան Վահագն (պ.գ.թ., դոց., aglyan@ysu.am)

Аглыан Ваагн (к.и.н., доц.)

Aglyan Vahagn (PhD in History, Associate Professor)

Ալեքսանյան Աշոտ (ք.գ.դ., պրոֆ.,

ashalex@ysu.am)

Александян Ашот (д.п.н., проф.)

Alexanyan Ashot (Sc. D. in Political Science, Professor)

Ավագյան Արսեն (պ.գ.դ., պրոֆ.,

a.avagyan@mfa.am)

Авагян Арсен (д.и.н., проф.)

Avagyan Arsen (Sc. D. in History, Professor)

Գալստյան Խաչիկ (ք.գ.դ., պրոֆ., khgals-
tyan@ysu.am)

Галстян Хачик (д.п.н., проф.)

Galstyan Khachik (Sc. D. in Political Science, Professor)

Ենգոյան Աշոտ (ք.գ.դ., պրոֆ., ashotyen-
goyan@ysu.am)

Енгоян Ашот (д.п.н., проф.)

Yengoyan Ashot (Sc. D. in Political Science, Professor)

Եփրեմյան Տիգրան (պ.գ.թ., tigran.yepre-
myan@ysu.am)

Епремян Тигран (к.и.н.)

Yepremyan Tigran (PhD in History)

Լեպեխին Վլադիմիր (ՌԴ, փ.գ.թ.,

info@i-eeu.ru)

Лепехин Владимир (РФ, к.ф.н.)

Lepekhin Vladimir (RF, PhD in Philosophy)

Կոմլևա Վալենտինա (ՌԴ, ւ.գ.դ., պրոֆ., kom-
leva@ranepa.ru)

Комлева Валентина (РФ, д.с.н., проф.)

Komleva Valentina (RF, Sc. D. in Sociological Sciences)

Կրյուչկով Իգոր (ՌԴ, փ.գ.դ., պրոֆ.,

ikriuchkov@ncfu.ru)

Крючков Игорь (РФ, д.и.н., проф.)

Kryuchkov Igor (RF, Sc. D. in History, Professor)

Կուրլև Կոնստանտին (ՌԴ, փ.գ.դ., դոց.,

kurylev-kp@rudn.ru)

Курылев Константин (РФ, д.и.н., доц.)

Kurylev Konstantin (RF, Sc. D. in History, Associate Professor)

Մանուկյան Ժակ (պ.գ.թ., դոց., zhak.manu-
kyan@ysu.am)

Манукян Жак (к.и.н., доц.)

Manukyan Zhak (PhD in History, Associate Professor)

Մարգարով Ալեքսանդր (ք.գ.դ., պրոֆ., amarka-
rov@ysu.am)

Маркаров Александр (д.п.н., проф.)

Markarov Alexander (Sc. D. in Political Science, Professor)

Մարուքյան Արմեն (պ.գ.դ., պրոֆ., ma-
rarmts@yahoo.com)

Марукян Армен (д.и.н., проф.)

Marukyan Armen (Sc. D. in History, Professor)

Պետրոսյան Վահրամ (պ.գ.թ., դոց., samuel-
son72am@yahoo.com)

Петросян Ваграм (к.и.н., доц.)

Petrosyan Vahram (PhD in History, Associate Professor)

Սաֆարյան Արամ (պ.գ.թ., դոց., aramsa-
faryan@yahoo.com)

Сафарян Арам (к.и.н., доц.)

Safaryan Aram (PhD in History, Associate Profes-
sor)

Սիլաև Նիկոլայ (ՌԴ, փ.գ.թ., n.si-
laev@innomgimo.ru)

Силаев Николай (РФ, к.и.н.)

Silaev Nikolay (RF, PhD in History)

Քերյան Գարիկ (ք.գ.դ., պրոֆ.,

g.keryan@ysu.am)

Керян Гарик (д.п.н., проф.)

Keryan Garik (Sc. D. in Political Science, Profes-
sor)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ INTERNATIONAL RELATIONS

- Shavarsh Kocharyan* – Some General Manifestations of Transition Periods of International Relations Systems 5
- Շավարշ Բոչարյան* – Միջազգային հարաբերությունների համակարգերի անցումային ժամանակահատվածների որոշ ընդհանուր դրսևորումներ (անգլ.)
- Шаварш Кочарян* – Некоторые общие проявления переходных периодов систем международных отношений (англ.)
- Սուրեն Թադևոսյան* – Ազգային դերի հայեցակարգերի ձևավորումն ու փոխակերպումը արդի միջազգային հարաբերություններում 12
- Сурен Тадевосян* – Формирование и трансформация концепций национальной роли в современных международных отношениях
- Suren Tadevosyan* – The Formation and Transformation of National Role Conceptions in Contemporary International Relations

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ПОЛИТОЛОГИЯ POLITICAL SCIENCE

- Խաչիկ Գալստյան* – «Մեծ եվրասիական գործընկերություն». Հայաստանը դիտարկման ընտրության առջև 26
- Хачик Галстян* – «Большое Евразийское партнерство»: дихотомический выбор Армении
- Khachik Galstyan* – “Greater Eurasian Partnership”: Armenia’s Dichotomous Choice
- Vahe Davtyan, Silva Khachikyan* – Decarbonization Policy in the Eurasian Economic Union: Meeting the Challenge of Global Climate Change (Comparative Analysis) 35
- Վահե Դավթյան, Սիլվա Խաչիկյան* – Դեկարբոնիզացիայի քաղաքականությունը Եվրասիական տնտեսական միությունում. կլիմայի գլոբալ փոփոխության մարտահրավերներին ընդառաջ (համեմատական վերլուծություն) (անգլ.)
- Vahe Davtyan, Silva Khachikyan* – Политика декарбонизации в Евразийском экономическом союзе: навстречу вызовам глобального изменения климата (сравнительный анализ) (англ.)

Հայկ Նազարյան – Ստրատագեմների կիրառման հայկական փորձը
(ընդհանուր ակնարկ)..... 50

Айк Назарян – Опыт Армении в использовании стратагем (общий обзор)
Hayk Nazaryan – Armenian Experience in the Usage of Stratagems (General
Overview)

Բագրատ Վարդանյան – Կենսանվտանգության ապահովման ոլորտում ՀՀ
պետական քաղաքականության կայացման նախադրյալները..... 61

Баграт Варданян – Предпосылки формирования государственной политики
Республики Армения в области биобезопасности
Bagrat Vardanyan – The Prerequisites for Establishing the Republic of Armenia
State Policy in the Field of Biosecurity

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ОБЗОР КНИГИ

BOOK REVIEW

Գեղամ Պետրոսյան – Գևորգ Ղուկասյան, Եվրոպայի հայկական լոբբին.
Էթնիկ լոբբինգի էությունը և գործառնման համատեքստը 72

Гегам Петросян – Геворг Гукасян, Армянское лобби Европы: сущность и
контекст этнического лоббирования

Gegham Petrosyan – Gevorg Ghukasyan, The Armenian Lobby of Europe: The
Essence and Context of Ethnic Lobbying

SOME GENERAL MANIFESTATIONS OF TRANSITION PERIODS OF INTERNATIONAL RELATIONS SYSTEMS

SHAVARSH KOCHARYAN* 
Yerevan State University

During the period of operation of the international relations system (IRS), the main actors of international relations (superpowers) that formed that system, despite the deep contradictions that exist among themselves, have a common interest in maintaining the current system, because it provides them with a privileged position in world politics. Guided by this common interest, the superpowers restrain each other and, with joint efforts, restrain actions of other actors in international relations that could undermine the existing system.

During the transition period of the IRS, on the one hand, the deterrence mechanism ceases to function, and on the other hand, the superpowers seek to use or provoke processes that will strengthen themselves and weaken the positions of their opponents in the struggle for the new IRS. The expression of the transformation of the interests of the superpowers are the general manifestations of the transition periods of the IRS 1 - an increase in the number of local and regional armed conflicts and their intensity; 2 - increase of genocide and other crimes against humanity; 3 - disregard of international law by actors of international relations and non-state organizations; 4 - discrediting of universal structures of international cooperation and decline in effectiveness of activities; 5 - a world war in which the victorious superpowers establish a new IRS. The listed manifestations, so far with the exception of the world war, are also characteristic of the current transitional period from Yalta-Potsdam to the new IRS.

Key words: *system of international relations, world politics, armed conflicts, genocide, crimes against humanity, international legal system, structures of international cooperation, interests of superpowers*

* **Shavarsh Kocharyan** – Candidate of Biological Sciences, Ambassador Extraordinary and Plenipotentiary, Associate Professor at YSU Chair of Foreign Relations and Diplomacy

Շավարշ Կոչարյան – կենսաբանական գիտությունների թեկնածու, արտակարգ և լիազոր դեսպան, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ

Шаварш Кочарян – кандидат биологических наук, чрезвычайный и полномочный посол, доцент кафедры международных отношений и дипломатии ЕГУ

Email: shavarsh.qocharyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0006-6952-3143>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.09.2024

Գրախոսվել է՝ 21.10.2024

Հաստատվել է՝ 03.12.2024

© The Author(s) 2024

Introduction

The period of operation of the international relations system ensures relative international peace, security and stability, as well as more favorable conditions for the economic, technical, scientific and cultural development of states. The first IRS, the Westphalian, outlined the architecture of modern international relations, but was limited mainly to the territory of Europe. As a result of the colonial policy of the European states, the Vienna system can be considered as the first universal IRS. The Vienna system laid the foundation for diplomatic and humanitarian law, as well as international cooperation structures, which got a modern look in the Yalta-Potsdam system.

The IRS ceases to function if and when the power balance established between the superpowers, which is the basis of the system's sustainability, is violated (Sheehan 2000¹). The Yalta-Potsdam bipolar system ceased to function in 1988-1991 as a result of the collapse of the communist camp led by the USSR in one of the poles. After the collapse, the processes unfolding in international relations and their possible or desirable future developments have become the subject of analyzes by various specialists (Brzezinski 1997²; Fukuyama 1992³; Hantington 1996⁴; Karaganov 2024⁵; Kissinger 2014⁶; Mearsheimer 2014⁷; Randall⁸ et al 2011; Sakwa 2024⁹; Wallerstein 2004¹⁰). Not opposing the approaches of these analyses, we find that insufficient attention has been paid to the common interest of the superpowers in the operation period of the IRS, on the one hand, and the transformation of this interest in the transition period of the IRS, on the other hand. Below we will study the influence of the superpowers' interests on the processes unfolding in the transition periods of the IRS.

The Duration of Transition Periods of the IRS

Experts' estimates of when the four pre-existing IRS ceased to function vary. Let us choose the most popular of these ratings. The Westphalian system ceased to function in 1674 as a result of the Great French Revolution, the Vienna one in 1853 with the Crimean War, the Yalta-Potsdam system in 1991 with the collapse of the USSR. The shortest was the Versailles-Washington system, which ended either in 1933, when Japan invaded Manchuria, or in 1935, when Italy invaded Ethiopia (see Table 1).

¹ Sheehan, Michael. 2000. "The Balance of Power: History and Theory." London and New York: Routledge.

² Brzezinski, Zbigniew. 1997. "The grand chessboard: American primacy and Its geostrategic imperatives." New York: Basic Books.

³ Fukuyama, Francis. 1992. "The end of history and the last man". New York: Free Press.

⁴ Hantington, Samuel. 1996. "The clash of civilizations and remarking of world order". New York: Simon and Schuster.

⁵ Karaganov, Sergej. 2024. "An age of wars? Article two. What is to be done." *Russia in Global Affairs* 22(2): 5-8.

⁶ Kissinger, Henry. 2014. "World order: Reflections on the character of nations and the course of history". London: Allen Lane.

⁷ Mearsheimer, John. 2014. "The tragedy of great power politics. Updated." New York: W. W. Norton and Company.

⁸ Randall, L. Schweller and Xiaoyu, Pu. 2011. "After unipolarity: China's visions of international order in an era of U.S. decline." *International Security* 36(1): 41-72.

⁹ Sakwa, Richard. 2024. "The international system and the clash of world orders." *China Int Strategy Rev.* 6: 39-57.

¹⁰ Wallerstein, Immanuel. 2004. "World-systems analysis: An introduction." Durham, North Carolina: Duke University Press.

Table 1

Duration of operation and transition periods of the IRS

System	Established, date	Ceased to function, date	Duration of activity period, year	Duration of the transition period to the next system, year
Westphalian	1648	1674	26	141
Vienna	1815	1853	38	68-69
Versailles-Washington	1921-1922	1933-1935	11-14	10-12
Yalta-Potsdam	1945	1991	46	still 33

Based on the objectives of our research, what is important is not the exact date of the termination of the activity of the IRS, but the existence of the transition period itself. Moreover, that period can be quite long. Thus, the transition from the Westphalian system to the Vienna system took about 140 years, and from the Vienna system to the Versailles-Washington system, about 70 years. A simple calculation based on the data in Table 1 shows that from 1648 to the present, the total duration of the transition periods of the IRS (252-255 years) exceeds the total duration of the periods of operation of the IRS (121-124 years) by about 2 times.

A full-fledged and in-depth assessment of the international processes taking place in recent decades becomes almost impossible or incomplete if we ignore the fact that at least 33 years have passed since the cessation of the Yalta-Potsdam system. This means that since at least beginning with 1991, the world has been in a transition period for the formation of a new IRS. Assessments that a unipolar system was established after the collapse of the USSR (Fukuyama 1992) were premature.

The Characteristics of the Transition Periods of the IRS

Based on the goals of our analysis, let us give the following working definition of the IRS. *The system of international relations is the universal structures of international cooperation and the normative framework of international law (international legal system) created or modified by the main actors of international relations (superpowers) who won another world war in order to manage international politics.*

The common interest of the superpowers in the operation period of the IRS. In the operation period of the IRS the superpowers that formed that system, despite the deep contradictions that exist among themselves, have a common interest in maintaining the existing system that gave them a privileged position. An action by any state against the international legal system can expand uncontrollably and undermine the existing system, calling into question the privileged positions of the superpowers that formed the system. Therefore, the superpowers that formed the system, with joint efforts, using also international structures and international law, strive to prevent the implementation of similar actions or their expansion.

In order to preserve the IRS, the superpowers also try to restrain each other's actions aimed at violating the fundamental principles of international law and discrediting international cooperation structures, because such actions can also undermine the existing system and violate the established power balance.

The interests of the superpowers in the transition periods of the IRS. In the transition periods of the IRS, the common interest of the superpowers to deter each other and other entities from acting against the international legal system is no longer present. The primary

goal of their foreign policy is their decisive role in forming a new IRS. Mutually exclusive views on the future of the IRS deepen the conflict between the superpowers. Contributing to the deepening of the conflict is the continuous struggle to replace the hegemonic state with a new hegemon, as at present China's challenge to the USA (see Mearsheimer 2010¹¹; Modelski 1995¹²). The superpowers are trying to strengthen themselves and allies and to weaken the opponents and their allies positions in the struggle for the new IRS. They try to use international law and international structures, as well as armed conflicts, including those provoked by them, to serve this purpose.

As a result of the superpowers' policy of supporting their own allies and weakening their opponents in the transition periods of the IRS, there is a lack of adequate response to cases of genocide and other crimes against humanity, which creates an atmosphere of impunity and creates fertile ground for new crimes. Even in the case of an obvious violation of the fundamental norm of international law, the making of an adequate decision in the structures of international cooperation is hindered by individual superpowers. And in the event of a decision being made, the tools set by international law to compel the violator to comply with the decision do not work. Actors in international relations, including the superpowers that formed the previous system, invoke international law to blame the adversary, including unjustifiably, but ignore international law in the actions of their own or allied states. As a result, the universal structures of international cooperation turn into a platform for mostly fruitless discussions and endless mutual recriminations.

General manifestations characteristic of the transition periods of the IRS. The foreign policy resulting from the transformed interests of the superpowers leads to the general manifestations typical of the transition periods of the IRS: the increase in the number of armed conflicts and their severity, the increase in the number of crimes of genocide and other crimes against humanity, the neglect of international law, the ineffectiveness and discrediting of the universal structures of international cooperation, and the world war, as a result of which the victorious superpowers establish a new IRS.

Table 2

Examples of general manifestations of previous and current transition periods of the IRS

General Manifestation	Previous transition periods of the IRS	Current transition periods of the IRS
Armed conflicts	1877-78 Russian-Turkish, 1894-95 Japanese-Chinese, 1897 Turkish-Greek, 1904-05 Russian-Japanese and 1911-12 Turkish-Italian wars. Spanish Civil War of 1936-39. Defense of Van in 1896, Zeytun Rebellions of 1895-96 and Sasun Rebellions of 1904.	The armed conflicts of the former federal Yugoslavia and the former Soviet Union from 1991, in the Middle East: Iraq, Libya, Syria, Gaza from 2011 and Russia-Ukraine from 2014. Aggressions of Azerbaijan in 1992, 2016, 2020 and 2023 against self-determined Nagorno Karabakh Republic.

¹¹ Mearsheimer, John. 2010. "The gathering storm: China's challenge to US power in Asia." *Chinese Journal of International Relations* 3(4): 381–96.

¹² Modelski, George. 1995. "The evolution of global politics." *Journal of World-Systems Research* 1(7): 424–467.

Genocide and other crimes against humanity	Genocides of Armenians of 1894-96 and of Armenians, Greeks, Assyrians and Yazidis beginning with 1915 in the Ottoman Empire. Genocide of Jews in Nazi Germany 1939-1945.	Rwanda in 1994, Darfur in 2003-05, in Iraq and Syria 2015 Yazidi genocides. Since 1988, Azerbaijan's policy of genocide and ethnic cleansing against Armenians and the forced deportation of Nagorno Karabakh population in 2023.
Ignoring international law and ineffectiveness of international structures	The inability of the League of Nations to counter the Japanese invasions of Manchuria in 1933 and China in 1937, the Italian invasion of Ethiopia in 1935, and the Turkish occupation of Hatay in 1939.	Ineffective discussions of Russia-Ukraine and Israel-Hamas armed conflicts at the UN. In 2023 Azerbaijan ignores the decision of the International Court of Justice to end blockade of Nagorno Karabakh.
Wars that resulted in the establishment of a new IRS	30-year war - Westphalian, Napoleonic wars - Vienna, World War I - Versailles-Washington, World War II - Yalta-Potsdam.	?

Discussion

Thus, wars, mass crimes against humanity, non-fulfillment of obligations assumed by international law and inefficiency of the universal structures of international cooperation are more characteristic of the transition periods of the IRS.

It is obvious that the same negative manifestations have been characteristic of the entire history of mankind. Therefore, the operation periods of the IRS can be evaluated as the achievement of the last centuries of humanity, because that period provides relative peace for states and peoples and more favorable conditions for development.

Moreover, during the period of establishment and operation of the IRS, international law develops and makes progress, as well as general and specialized structures of international cooperation are formed and improved to protect international law. As a result, each subsequent IRS surpasses the previous one from that point of view, and the most advanced was the Yalta-Potsdam system. Examples of progress in international law are: the prohibition of the right of force that has existed for thousands of years, the principle of equal rights and self-determination of peoples, the principle of territorial integrity of states and the norms establishing fundamental human rights (UN Charter, 1945¹³; Universal Declaration of Human Rights, 1948¹⁴; Convention on the prevention and punishment of the crime of genocide, 1948¹⁵). An example of the improvement of international cooperation structures is the United Nations and its specialized structures. The

¹³ UN Charter. 1945. <https://www.un.org/en/about-us/un-charter>

¹⁴ Universal declaration of human rights. 1948. <https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights>

¹⁵ Convention on the prevention and punishment of the crime of genocide. 1948. [https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocities-crimes/Doc.1 Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf](https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocities-crimes/Doc.1%20Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf)

United Nations Charter (Chapter VII) established for the first time in history the possibility of imposing peace on an aggressor state by military force, with the consensus of the five permanent members of the Security Council.

However, if we look at the transition periods of the IRS in their historical sequence, then the uncivilized manifestations described in this article do not decrease over time, if they do not increase. In other words, the gap between the goals set by the international legal system and international cooperation structures, on the one hand, and the actual processes contradicting them, on the other hand, is deepening.

To explain this discontinuity, we start with the common interest of the superpowers that formed the IRS to maintain a privileged position in the world politics. Guided by that common interest, they, also using international law and international structures, restrain each other and suppress the actions of other entities that undermine the existing system. Such a common interest and therefore a deterrent factor is absent in the transition periods of the IRS. In the transitional periods, the superpowers strive to use international law and international structures in the struggle for a new IRS, to strengthen their own positions and those of their allies, and to weaken the positions of their opponents. Therefore, states and non-state entities, in the absence of unified opposition, and in some cases direction, of superpowers, get the opportunity to act more freely and with impunity. The foreign policy of the states in transition periods of the IRS also has other features, which is the subject of a separate analysis.

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ – Միջազգային հարաբերությունների համակարգերի անցումային ժամանակահատվածների որոշ ընդհանուր դրսևորումներ – Միջազգային հարաբերությունների համակարգի (ՄՀՀ) հիմնական դերակատարները (գերտերությունները), չնայած միմյանց միջև առկա խորը հակասություններին, ունեն ընդհանուր շահ՝ պահպանել գործող համակարգը, քանի որ այն իրենց տրամադրում է արտոնյալ դիրք համաշխարհային քաղաքականությունում: Առաջնորդվելով այդ ընդհանուր շահով՝ գերտերությունները զսպում են միմյանց, իսկ համատեղ ուժերով՝ միջազգային հարաբերությունների այլ դերակատարների այնպիսի գործողությունները, որոնք կարող են խաթլել գործող համակարգը:

ՄՀՀ-ի անցումային ժամանակահատվածում մի կողմից դադարում է գործել զսպման մեխանիզմը, և մյուս կողմից գերտերությունները ձգտում են օգտագործել կամ հրահրել գործընթացներ, որոնք կամրապնդեն իրենց և կթուլացնեն հակառակորդների դիրքերը նոր ՄՀՀ-ի համար պայքարում: Գերտերությունների շահերի փոխակերպման արտահայտությունն են ՄՀՀ անցումային ժամանակահատվածների ընդհանուր դրսևորումները. 1) լուկա և տարածաշրջանային զինված հակամարտությունների քանակի և դրանց սաստկության աճ; 2) ցեղասպանության և մարդկության դեմ այլ հանցագործությունների աճ; 3) միջազգային հարաբերությունների դերակատարների և ոչ պետական կազմավորումների կողմից միջազգային իրավունքի անտեսում; 4) միջազգային համագործակցության համընդհանուր կառույցների հեղինակազրկում և գործունեության արդյունավետության անկում; 5) համաշխարհային պատերազմ, որի արդյունքում հաղթած գերտերությունները հաստատում են նոր ՄՀՀ: Թվարկված դրսևորումները, դեռևս բացառությամբ համաշխարհային պատերազմի, բնորոշ են նաև ներկայիս անցումային՝ Յալթա-պոտսդամյանից դեպի նոր ՄՀՀ ժամանակահատվածին:

Բանալի բառեր – միջազգային հարաբերությունների համակարգ, համաշխարհային քաղաքականություն, զինված հակամարտություններ, ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություններ, միջազգային իրավակարգ, միջազգային համագործակցության կառույցներ, գերտերությունների շահեր

ШАВАРШ КОЧАРЯН – Некоторые общие проявления переходных периодов систем международных отношений. – В период функционирования системы международных отношений (СМО) основные акторы международных отношений (сверхдержавы), сформировавшие эту систему, несмотря на существующие между ними глубокие противоречия, имеют общий интерес в сохранении действующей системы, поскольку она обеспечивает им привилегированное положение в мировой политике. Руководствуясь этим общим интересом, сверхдержавы сдерживают друг друга и совместными усилиями сдерживают действия других акторов международных отношений, которые могут подорвать существующую систему.

В переходный период СМО, с одной стороны, перестает действовать механизм сдерживания, а с другой стороны, сверхдержавы стремятся использовать или спровоцировать процессы, которые укрепят их собственные позиции и ослабят позиции их противников в борьбе за новую СМО. Выражением трансформации интересов сверхдержав являются общие проявления переходных периодов СМО: 1) увеличение количества локальных и региональных вооруженных конфликтов и их интенсивности; 2) увеличение актов геноцида и других преступлений против человечества; 3) игнорирование международного права субъектами международных отношений и негосударственными образованиями; 4) падение авторитета универсальных структур международного сотрудничества и снижение эффективности их деятельности; 5) мировая война, по результатам которой победившие сверхдержавы устанавливают новую СМО. Перечисленные проявления, пока что за исключением мировой войны, характерны и для нынешнего переходного периода от Ялта-Потсдамской к новой СМО.

Ключевые слова: *система международных отношений, мировая политика, вооруженные конфликты, геноцид, преступления против человечности, международная правовая система, структуры международного сотрудничества, интересы супердержав*

ԱԶԳԱՅԻՆ ԴԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հոդվածի նպատակն է գնահատել ազգային դերի հայեցակարգերի (այսուհետ՝ նաև՝ ԱԴՀ) դերը պետությունների արտաքին քաղաքականության վերլուծության մեջ՝ բացահայտելու դրանց ներքին և արտաքին հիմնապատճառները: Հոդվածում գնահատվում է դերերի տեսության նշանակությունը միջազգային հարաբերությունների տարբեր դպրոցների համատեքստում, համեմատվում են ԱԴՀ-ի գոյություն ունեցող սահմանումները և վեր հանվում դրանց կոնկրետ սահմանափակումները, այդ թվում՝ ներգրավման մակարդակի սահմանափակությունը, ներքին կոնսենսուսի կանխադրույթը և դերային դինամիկայի անտեսումը: Տրվում է ԱԴՀ-ի նոր սահմանում, որը ընդգրկում է ազգի ռազմավարական նպատակների դինամիկ և հավաքական ընկալումը՝ հաշվի առնելով ինչպես ներքաղաքական, մշակութային և սոցիալական գործոնները, այնպես էլ արտաքին միջավայրի տեղաշարժերն ու ազդեցությունը: Արդյունքում, ԱԴՀ-ի տեսական շրջանակն առաջարկվում է որպես միջազգային հարաբերությունների արդի խնդիրների վերլուծության արդյունավետ գործիք՝ պետությունների արտաքին քաղաքական վարքագիծը բացատրելու և կանխատեսելու համար:

Բանալի բառեր – *դերային ադապտացիա, աշխարհաքաղաքական փոփոխություններ, ուժային վերադասավորումներ, ռազմավարական շահեր, գլոբալ կառուցակարգեր, միջազգային հարաբերություններ*

Ներածություն

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տասնամյակները նշանավորվեցին միջազգային համակարգի շոշափելի կերպափոխումով, ինչն ուղեկցվում էր ապագադրությացումով, ազգայնականության աճով և Սառը պա-

* Սուրեն Թադևոսյան – ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ և դասախոս

Сурен Тадевосян – Аспирант и преподаватель кафедры политологии ЕГУ

Suren Tadevosyan – PhD Student and lecturer at YSU Chair of Political Science

Էլ. փոստ՝ Suren.tadevosyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0005-8092-2359>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 08.10.2024

Գրախոսվել է՝ 31.10.2024

Հաստատվել է՝ 03.12.2024

© The Author(s) 2024

տերազմի հակասությունների սրմամբ: Փոխակերպումների այս ժամանակաշրջանն անհրաժեշտություն առաջացավ մշակելու միջազգային հարաբերություններում (այսուհետ՝ ՄՀ) պետությունների վարքագիծը բացատրող և կանխատեսող տեսական շրջանակ, որը հաշվի կառներ պետությունների արտաքին վարքագիծը պայմանավորող ոչ միայն նյութական, այլև գաղափարական հիմնապատճառները: ՄՀ ռեալիզմի ու լիբերալիզմի դպրոցները հակված էին պետությունները դիտարկելու որպես միջազգային համակարգի ունիտար սուբյեկտներ՝ հաճախ անտեսելով դերի ընկալման ազդեցությունը պետությունների արտաքին քաղաքական վարքագծի ձևավորման վրա: Տեսական այս բացը լրացնելու շարժառիթով էր պայմանավորված **դերերի տեսության** ներմուծումը ՄՀ գիտակարգ: Այդ ինտեգրման առաջին փորձը կատարեց Կալևի Հոլստին¹, նպատակ ունենալով պարզել, թե ինչպես են **ազգային դերի՝ հայեցակարգերն** (այսուհետ՝ ԱԴՀ) ազդում պետությունների արտաքին քաղաքականության վրա:

Միջազգային հարաբերությունների ավանդական տեսությունների (ՄՀՏ) ճյուղավորումները ևս (օրինակ՝ ռեալիզմի տարբեր ուղղությունները և վենդոյան կոնստրուկտիվիզմը) առաջարկում են պետության արտաքին քաղաքական վարքի կառուցվածքային մեկնաբանություններ՝ հաճախ անտեսելով պետական ինքնավարության (state agency) նշանակությունը²: Մյուս կողմից՝ արտաքին քաղաքականության վերլուծության (այսուհետ՝ ԱԲՎ) տեսական մոտեցումները (օրինակ՝ բանական դերակատարի, կառավարական, սակարկման, կազմակերպական գործընթացի մոդելները) հաճախ անտեսում են կառուցվածքային գործոնների ազդեցությունը արտաքին քաղաքական որոշումների կայացման մեջ: Իրականում, սակայն, որոշումներ կայացնողների և նրանց գործառական միջավայրի փոխազդեցությունը պարզելու համար բավարար չէ հիմնվել բացառապես կառուցվածքային կամ գուտ անհատակենտրոն

¹ Տե՛ս **Holsti, K. J.** (1970). National role conceptions in the study of foreign policy. *International studies quarterly*, 14(3), էջ 233-309:

^{*} Դերերի տեսության շրջանակներում «ազգ» հասկացությունը մեկնաբանվում է որպես մարդկանց հավաքականություն, որը միավորված է պատմական հիշողությամբ, մշակութային արժեքներով, կրոնական և լեզվական ընդհանրությամբ և սոցիալական կառուցվածքով: Ազգը որոշակի նպատակներ հետապնդող դերակատար է, որի մշակութային և պատմական գերակա գործոններն ուղղորդում են որոշում կայացնողների ընկալումներն ու ռազմավարությունը: Ազգի այս գործառույթը մշտապես ձևավորվում և վերասահմանվում է միջազգային համակարգում առկա փոխադարձ ազդեցությունների և ակնկալիքների պայմաններում: Ազգի ընկալման այս մոտեցումը ենթադրում է, որ արտաքին դերակատարները, միջավայրի տեղաշարժերն ու գլոբալ քաղաքական համակարգի ճնշումները կարող են վերափոխել ազգային ինքնությունից բխող նպատակներն ու կարգավիճակը՝ պետությանը հարկադրելով շարունակաբար վերանայելու իր առաջնահերթությունները միջազգային հարաբերությունների համակարգում:

² Տե՛ս **Cantir, C., & Kaarbo, J.** (2016). Unpacking Ego in Role Theory: Vertical and Horizontal Role Contestation and Foreign Policy 1. In *Domestic role contestation, foreign policy, and international relations* (էջ 1-22), Routledge:

(agent-based) բացատրությունների վրա³:

Չնայած դերերի տեսության շարունակական մշակմանը՝ գրականության մեջ դեռևս առկա է նշանակալի բաց ԱՔՎ-ի մեջ ԱԴՀ-ի ճշգրիտ դերի, կառուցվածքի և ազդեցության գնահատման առումով: Գոյություն ունեցող սահմանումները հաճախ ենթադրում են ներքին կոնսենսուս ազգային դերերի վերաբերյալ և դրանք ներկայացնում են որպես ստատիկ կառուցվածքներ՝ չարտացոլելով ԱԴՀ-ի դինամիկ բնույթը գործնականում: Բացի այդ, առկա մոտեցումներում բացակայում է ԱԴՀ-ի ձևավորման ներքին և արտաքին հիմնապատճառների տարանջատումը:

Մեր հոդվածի նպատակն է պարզել ԱԴՀ-ի տեղը ԱՔՎ-ի մեջ: Այդ նպատակով սահմանվել են հետազոտական հետևյալ խնդիր-հարցադրումները՝ ցույց տալ ԱԴՀ-ի առկա սահմանումների առավելություններն ու թերությունները, վերլուծել ԱԴՀ-ի կառուցվածքն ու զարգացման փուլերը և վեր հանել դրանց ներքին ու արտաքին հիմնապատճառները:

Դերերի տեսությունը միջազգային հարաբերություններում

Դերերի տեսության ներմուծումը միջազգային հարաբերությունների գիտակարգ ունի մի շարք առավելություններ: Այն հնարավորություն է տալիս ինտեգրելու ԱՔՎ և ՄՀՏ վերլուծական մակարդակների ներուժը, մեղմելու խզումը առաջինի համակարգակենտրոն և երկրորդի անհատակենտրոն վերլուծական մոտեցումների միջև⁴: Այս հանգամանքը թույլ է տալիս դերերի տեսությունը տեղակայել ՄՀՏ և ԱՔՎ միջակայքում⁵: Բացի այդ, դերերի տեսությունը հնարավորություն է տալիս կամրջելու միջազգային հարաբերությունների տարբեր դպրոցների, մասնավորապես՝ ռեալիզմի և կոնստրուկտիվիզմի հայեցակարգերը՝ օգնելով խուսափելու տեսական միակողմանիությունից:

Դերերի տեսությունը արտաքին քաղաքականության ուսումնասիրության համար արժեքավոր է երեք առումով՝ 1. **նկարագրական**, քանի որ այն առաջարկում է համոզմունքները, ըմբռնումներն ու ինքնությունները դասակարգելու համապարփակ լեզու, 2. **կազմակերպական**, քանի որ ապահովում է վերլուծության բազմամակարդակ շրջանակ, 3. **բացատրական**, որը դրսևորվում է միջգիտակարգային ենթաճյուղերի առաջացումով և տեսական այլ մոտեցումներին հարմարվելով⁶:

Ի հակադրումն նեոռեալիզմի կենտրոնական պնդման, որ պետությունների

³ Տե՛ս **Breuning, M.** (2011). Role theory research in international relations: state of the art and blind spots. *Role theory in international relations*, էջ 16-35:

⁴ Տե՛ս **Thies, C. G., & Breuning, M.** (2012). Integrating foreign policy analysis and international relations through role theory. *Foreign Policy Analysis*, 8(1), էջ 1-4:

⁵ Տե՛ս **Harnisch, S.** (2011). Role theory: operationalization of key concepts. In *Role theory in international relations* (էջ 7-15). Routledge:

⁶ Տե՛ս **Walker, S.** (1987). The relevance of role theory to foreign policy analysis. *Role theory and foreign policy analysis*, էջ 1-4:

վարքը գերազանցապես պայմանավորվում է միջազգային հարաբերությունների կառուցվածքով, դերերի տեսական մոտեցումը հիմնվում է դերակատարների և կառուցվածքի միջև բազմաչափ հարաբերությունների առկայության վրա: Ուռքերը ընդգծում է, որ դերերի վերհանումն ու վերլուծությունը հետազոտողներին հնարավորություն են տալիս դուրս գալու վերլուծական պարզ կատեգորիաներից և բացահայտելու արտաքին քաղաքական վարքագծի շարժառիթների ընդգրկուն շրջանակ⁷: Դա թույլ է տալիս ամբողջականացնել նեո-ռեալիզմի բացատրական ներուժը՝ **պետությունների սոցիալիզացիան** բացատրելու իր կարողությամբ⁸:

Դրանով դերերի տեսությունը համաձայնում է դերակատարի և կառույցի փոխադարձ պայմանավորման վերաբերյալ կոնստրուկտիվիստական հիմնադրույթին: Միևնույն ժամանակ, այն ընդունում է կոնստրուկտիվիզմին ուղղված քննադատությունը, ըստ որի՝ փոխպայմանավորման գործառնականացումը հաճախ մնում է չլուծված մարտահրավեր⁹: Այդ բացը լրացնելու նպատակով դերերի տեսությունը փորձում է պարզել, թե ինչպես են որոշում կայացնողները սահմանում իրենց միջազգային դերերը՝ ազդվելով ներքին-մշակութային միջավայրից, գնահատելով նյութական ռեսուրսները և կառավարելով կառուցվածքային սահմանափակումները¹⁰: Հետևապես, ԱՂՀ-ն կիրառվում է որպես միջազգային հարաբերությունների նյութական և գաղափարական ասպեկտները կամրջող կոգնիտիվ գործիք: Նշված առավելությունները թույլ են տալիս համաձայնել այն պնդմանը, որ ԱՂՀ կոնցեպտուալիզացիան եզակի դեպքերից էր, երբ որևէ (տվյալ դեպքում՝ դերերի) տեսության փոխառությունը գիտելիքի այլ ոլորտի (ԱՔՎ) կողմից դրական արդյունք է տվել¹¹:

Ազգային դերի հայեցակարգի սահմանումները

Հոլստին կատարեց ազգային դերի հայեցակարգերի սահմանման և տիպաբանության առաջին համակարգված վերլուծությունը՝ ելակետային համարելով, որ դերային ընկալումները ձևավորվում են ինչպես ներքին (օրինակ՝ պատմական փորձառություն, մշակութային նորմեր, գաղափարախոսություն և հաստատություններ), այնպես էլ արտաքին (աշխարհաքաղաքական միջավայր, միջազգային նորմեր և այլ պետությունների վարքագիծ) գործոնների ազդեցությամբ¹²: Ըստ այս մոտեցման՝ ԱՂՀ-ն ներառում է քաղաքականություն

⁷ Տե՛ս Walker, S.G. (1987) (ed.) Role theory and foreign policy Analysis, Durham: Duke University press, էջ 241-254:

⁸ Տե՛ս Thies, C. G. (2010). State socialization and structural realism. *Security Studies*, 19(4), էջ 689-717:

⁹ Տե՛ս Checkel, J. T. (1998). The constructive turn in international relations theory. *World politics*, 50(2), էջ 324-348.

¹⁰ Տե՛ս Breuning, M., նշվ. աշխ., էջ 19:

¹¹ Տե՛ս Backman, C. W. (1970). Role theory and international relations: A commentary and extension. *International Studies Quarterly*, 14(3), 310-319:

¹² Տե՛ս Holsti, K. J., նշվ. աշխ., էջ 233-309:

մշակողների որոշումների, պարտավորությունների, կանոնների և գործողությունների, միջազգային համակարգում կամ ենթահամակարգերում շարունակական գործառույթների (եթե այդպիսիք կան) սահմանումները: Այլ ձևակերպմամբ՝ «դա նրանց «պատկերացումն» է արտաքին միջավայրի նկատմամբ իրենց պետության համապատասխան կողմնորոշումների կամ գործառույթների մասին»¹³: Հոլստին, ուսումնասիրելով 71 երկրների առաջնորդների 972 ելույթներ, առանձնացնում է ազգային դերի հայեցակարգի 17 տիպեր, որոնք ներկայացվում են ըստ արտաքին միջավայրում «ակտիվության» նվազման հաջորդականության:

Ուիշը¹⁴ առանձնացնում է Հոլստիի այս մոտեցման երկու թերություն՝ 1) Հոլստին իր սահմանումն ու տիպաբանությունը կառուցում է՝ ելնելով միայն պետության միջազգային ներգրավման կամ մասնակցության մակարդակից և 2) չի տրամադրում ներգրավման և մասնակցության չափման համակարգված եղանակ:

Համաձայնելով այդ քննադատությանը՝ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել մի քանի սահմանափակում ևս: Հոլստիի սահմանումը գերազանցապես կենտրոնանում է քաղաքականություն մշակողների ընկալումների և պատկերացման վրա՝ անտեսելով հասարակական կարծիքի և ոչ պետական սուբյեկտների ազդեցությունը դերի ձևավորման գործընթացում: Այն ենթադրում է ԱԴՀ-ի շուրջ ներքին-ներազգային կոնսենսուսի առկայություն, մինչդեռ արտաքին քաղաքականության վերլուծության տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ այդպիսի կոնսենսուսը խիստ հազվադեպ է¹⁵, իսկ տարբեր ԱԴՀ-ների միաժամանակյա գոյությունը ցանկացած պատմական ժամանակաշրջանում ենթադրում է, որ դրանցից մեկի (մի քանիսի) գերակայությունն էապես կախված է կառավարման ոճից և ներքաղաքական իրավիճակից¹⁶: Ավելին՝ ԱԴՀ էվոլյուցիային բնորոշ է դերային մրցակցությունը իշխանության տարբեր մարմինների միջև (հորիզոնական), իշխանության և հասարակության միջև (ուղղահայաց)¹⁷: Դերային մրցակցությունը և կոնֆլիկտը բնորոշ են նաև միջպետական հարաբերություններին¹⁸:

Հոլստիի դերի «չափման» հիմնական մեթոդը, այն է՝ արտաքին քաղաքա-

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս **Wish, N. B.** (1980). Foreign policy makers and their national role conceptions. *International Studies Quarterly*, 24(4), էջ 532-554:

¹⁵ Տե՛ս **Cantir, C., & Kaarbo, J.**, նշվ. աշխ., էջ 1-22:

¹⁶ Տե՛ս **Shih, C. Y.** (1988). National role conception as foreign policy motivation: The psychocultural bases of Chinese diplomacy. *Political Psychology*, էջ 599-631:

¹⁷ Տե՛ս **Kaarbo, J., & Cantir, C.** (2017). Domestic role contestation and foreign policy. In *Oxford Research Encyclopedia of Politics*, էջ 1-20:

¹⁸ Տե՛ս **Koenig, N.** (2016). Multilevel role contestation: The EU in the Libyan crisis. In *Domestic role contestation, foreign policy, and international relations* (էջ 157-173). Routledge:

կան որոշում կայացնողների պաշտոնական ելույթների բովանդակային վերլուծությունը, թույլ չի տալիս ամբողջությամբ բացահայտել դերերի գենեզիսի և էվոլյուցիայի հասարակական, տնտեսական և մշակութային համատեքստերը: Հանձն առնելով նշյալ խնդիրների լուծումը՝ Կրոտցը չի առանձնացնում կոնկրետ դերակատարներ՝ կարևորելով պատկերացումների ներազգային (domestically) ընդունվածության հանգամանքը: Նա փորձում է առաջարկել 21-րդ դարի իրողություններին համապատասխանող մոտեցում՝ ԱՂՀ-ն սահմանելով որպես «ներազգային ընդհանուր տեսակետներ և ըմբռնումներ միջազգային ասպարեզում սեփական պետության՝ որպես սոցիալական հավաքականության պատշաճ դերի և նպատակի վերաբերյալ»¹⁹:

Մեր կարծիքով՝ այս սահմանումը ևս ունի մի շարք խնդրահարույց կողմեր: Հոլստիի սահմանման նման այն ենթադրում է ներազգային կոնսենսուսի ի բնե առկայություն: Մյուս կողմից՝ այս սահմանման «ստատիկությունը» թույլ չի տալիս պարզել, թե կոնկրետ ինչ հանգամանքների ազդեցությամբ ԱՂՀ-ն կարող է փոփոխվել կամ դուրս մղվել՝ տեղը զիջելով նորերին:

Հայմենսը²⁰ ԱՂՀ-ի փոխարեն կիրառում է «ազգային ինքնության հայեցակարգ» հասկացությունը և այն դիտարկում իբրև հիմնարար անկախ փոփոխական՝ քաղաքական «մեծ որոշումներ» (օրինակ՝ միջուկային կարողությունների ձեռքբերմանը հետամուտ լինելու) կայացնելիս: Այս մոտեցումը հակադրվում է որոշումների կայացման ծախսերի և օգուտների վերլուծության դասական-ռացիոնալ տեսությանը՝ ընդգծելով որոշումներ կայացնելիս «էմոցիոնալ» գործոնների նշանակությունը: Ի հակադրումն վերոնշյալի՝ Հայմենսը²¹ ազգային ինքնության ձևավորումը համարում է շարունակական գործընթաց, որում կենտրոնական է համեմատությունը սեփական ազգի և այլ ազգերի միջև, ուստի ԱՂՀ-ն սահմանում է որպես անհատի [առաջնորդի] կողմից ազգի ինքնության ըմբռնում՝ ներառյալ ազգի *ի բնե* մարմնավորած արժեքները և համաշխարհային ասպարեզում նրա *ի բնե* դիրքը այլ ազգերի համեմատ:

Հայմենսի սահմանումը, նախորդ երկուսի համեմատ, կարող է չափազանց անհատականացված լինել և հաշվի չառնել ազգի դերի ընկալման հավաքականության հատկանիշը: Այս սահմանումը ենթադրում է, որ գոյություն ունեն ազգի «բնական» կամ «տրված» դերեր (և դրանց ընկալումներ) և աշխարհակարգում կանխորոշված դիրք: Սակայն դերային հայեցակարգերը անընդհատ վիճարկվում են, քանի որ դրանց կիրարկումը սերտորեն առնչվում է այլ սուբյեկտների դերերին (հակա- և փոխլրացնող դերեր)²²:

Հաշվի առնելով նախորդ սահմանումներում առկա բացերը՝ առաջարկում

¹⁹ Krotz, U. (2002). National Role Conceptions and Foreign Policies: France and Germany Compared. CES Germany & Europe Working Papers, No. 02.4, 2002.

²⁰ St' u Hymans, J. E. (2006). *The Psychology of Nuclear Proliferation: Identity, Emotions, and Foreign Policy*. Cambridge University Press, էջ 16-20:

²¹ St' u նույն տեղը:

²² St' u Harnisch, S., նշվ. աշխ., էջ 7-15:

ենք ԱԴՀ **սահմանման մեր տարբերակը**. ազգային դերի հայեցակարգը միջազգային համակարգում ազգի ռազմավարական նպատակների, պարտականությունների և գործառնությունների հավաքական ընկալումն է, որը կարող է փոփոխվել ներքին կամ արտաքին միջավայրի տեղաշարժերի պատճառով:

Ազգային դերերի կառուցվածքը և զարգացման փուլերը

Դերերի տեսությունը ձգտում է բացատրել, թե ինչպես են պետությունները մշակում և կյանքի կոչում իրենց դերերը միջազգային հարթակում՝ փորձելով հաղթահարել միջազգային դիրքի հետ կապված խոչընդոտները²³: Այս առումով ԱԴՀ-ն դիտարկվում է որպես պետությունների արտաքին քաղաքական վարքագիծը պայմանավորող կայուն ուղենիշ, որն օգտակար է երկարաժամկետ վարքագծային օրինաչափությունների, այլ ոչ թե առանձին որոշումների բացատրման համար²⁴: Դրանք ներառում են միջազգային ասպարեզում պետության ընկալվող պարտավորությունների, ձգտումների և ընդհանուր ռազմավարական ինքնության երկարաժամկետ և համապարփակ պատկերը: Հաշվի առնելով արտաքին քաղաքականությունը պայմանավորող գործոնների բազմազանությունը՝ Հոլստին պնդում է, որ այն բխում է դերակատարի հայեցակարգերից, ներքին կարիքներից և արտաքին միջավայրի կարևոր իրադարձություններից կամ միտումներից²⁵:

Հոլստիի հիմնարար աշխատությանը հաջորդող ուսումնասիրությունները նպատակ ունենին կատարելագործելու դերերի վերհանման մեթոդաբանությունը և այն կիրառելու կոնկրետ երկրների արտաքին քաղաքականության հիմնապատճառները ի ցույց դնելու համար: Այս ժամանակաշրջանի նշանակալից ներդրումը ԱԴՀ-ի գործառնականացումն էր բազմաչափ (MDPREF) էմպիրիկ վերլուծության միջոցով: Տվյալ մեթոդի օգնությամբ Ուիշը էմպիրիկորեն ուսումնասիրում է ԱԴՀ-ի և արտաքին քաղաքականության միջև կապը և առանձնացնում ԱԴՀ-ն պայմանավորող տասը փոփոխական՝ դասակարգված ըստ կարգավիճակի, շարժառիթային կողմնորոշման և բովանդակային-համախնդրային ոլորտների²⁶: Արտաքին քաղաքական վարքագիծը ձևավորող հիմնական գործոններ են դիտարկվում «համագործակցային մոտեցումն ընդդեմ մրցակցայինի» ընտրությունը և «բարձր կարգավիճակն ընդդեմ ցածրի» ընկալումը²⁷: ԱԴՀ-ն սահմանում է արտաքին քաղաքականության ձևավորման վրա ազդող կայուն նորմեր և ուղենիշներ: Երբ արտաքին քաղաքականությունը համընկնում է ԱԴՀ մոդելին, այն ամրապնդում է ազգային ինքնության հավաքական զգացումը և հստակեցնում ազգի նպատակը, կարգավիճակն

²³ Տե՛ս **Breuning, M.**, նշվ. աշխ., էջ 16-35:

²⁴ Տե՛ս **Wish, N. B.**, նշվ. աշխ., էջ 532-554:

²⁵ Տե՛ս **Holsti, K. J.**, նշվ. աշխ., էջ 243:

²⁶ Տե՛ս **Wish, N. B.**, նշվ. աշխ.:

²⁷ Տե՛ս նույն տեղը:

ու հիմնարար արժեքները²⁸:

Ակբաբան և Օզդամարն առանձնացնում են ԱՂՀ ձևավորող երկու խումբ աղբյուրներ՝

1. **նյութական**՝ երկրի տարիքը (անկախությունից սկսած), չափը, գտնվելու վայրը, տնտեսական վիճակը (ներառյալ զարգացման միտումները), դաշինքները և դրանից բխող դիրքը միջազգային համակարգում,

2. **գաղափարական**՝ պատմությունը, մշակութային ժառանգությունը և ազգային ինքնությունը²⁹:

Թեև ԱՂՀ-ն կարող է ստատիկ թվալ իր տնականության պատճառով, այն այդուհանդերձ ենթակա է փոփոխության գլոբալ տեղաշարժերի, հակամարտությունների, հեղափոխությունների, ճգնաժամերի և այլ գործոնների հետևանքով: Առանձնացվում է ԱՂՀ զարգացման երեք մակարդակ՝

1. դերի հարմարեցում, երբ արտաքին քաղաքականության նպատակները մնում են անփոփոխ, սակայն փոխվում են դրանց հասնելու ռազմավարությունն ու գործիքները,

2. դերի ուսուցում, երբ փոխվում են արտաքին քաղաքական նպատակները,

3. դերի փոխակերպում, երբ փոփոխվում են ինքնությունն ու հիմնարար շահերը³⁰:

ԱՂՀ զարգացումը վերլուծելիս կարևոր է արձանագրել, որ դրա փուլերը գծային-հաջորդական կամ փոխադարձ բացառող չեն: Կարծում ենք, որ արտաքին քաղաքականության որևէ ուղղություն և դրան համապատասխանող ԱՂՀ-ն կարող են ենթարկվել հարմարեցման, սակայն այլ ուղղություններ միաժամանակ կարող են գտնվել ուսուցման կամ վերափոխման փուլերում: ԱՂՀ փոփակերպումները կարող են տեղի ունենալ ինչպես պետությունների ներսում, այնպես էլ այլ պետությունների հետ փոխազդեցության միջոցով³¹: Ընդ որում, դերի և կարգավիճակի հայեցակարգայնացումը անընդհատ գործընթաց է, ինչը հնարավորություն է տալիս առանձնացնել ԱՂՀ-ի երեք պայմանական խումբ՝ *հաստատուն, փոխակերպված և նորահայտ*³²:

Ազգային դերերի արտաքին հիմնապատճառները

Ազգային դերերի կոնցեպտուալիզացիայի մեջ հիմնարար է միջազգային

²⁸ Տե՛ս **Akubo, A. A.** (2019). National Role Conception Model: A Critical Analysis. Kogi State University:

²⁹ Տե՛ս **Akbaba, Y., Özdamar, Ö., & James, P.** (2019). *Role Theory in the Middle East and North Africa: Politics, Economics and Identity*. Routledge:

³⁰ Տե՛ս **Harnisch, S., Frank, C., & Maull, H. W.** (2011). Conclusion: role theory, role change, and the international social order. In *Role Theory in International Relations* (էջ 252-261). Routledge:

³¹ Տե՛ս նույն տեղը:

³² Տե՛ս **Galstyan, N. S., Abrahamyan, E., & Davtyan, E.** (2021). Armenia's International Status Aspirations in 2008–2020. *Friedrich Ebert Stiftung*:

համակարգի և դրա առանձին դերակատար(ներ)ի փոխազդեցության գնահատումը: Մի կողմից՝ արտաքին քաղաքական որոշում կայացնողները կատարյալ բանական դերակատարներ չեն, ուստի նրանց կողմից ՄՀ կառուցվածքի որակի մեկնաբանությունն ու սեփական դերի ընկալումն էապես ազդում են արտաքին միջավայրում նրանց վարքագծի վրա³³: Մյուս կողմից՝ միջազգային կառուցվածքի անգամ փոքր՝ իրական կամ ընկալվող տեղաշարժերը կարող են դերակատարներին ստիպել վերանայել նախկինում որդեգրած ազգային դերերը³⁴: Այս համատեքստում ԱՂՀ-ի կերպափոխումը կարող է դիտվել որպես միջազգային կառուցվածքային տեղաշարժերի բարոմետր: Միջազգային կազմակերպությունները ևս կրում են ազգային և միջազգային մի շարք դերեր, որոնք հաստատում են նրանց ինքնությունը, կարգավորում արտաքին քաղաքական վարքագիծը և ազդում աշխարհակարգի փոխակերպման վրա³⁵: Այս դեպքում միջազգային համակարգը կարող է ընկալվել ոչ միայն որպես փոխգործակցության օրինաչափությունների ամբողջություն, այլ նաև ազգային դերերի տարբեր պատկերացումների որոշակի բաշխում ցանկացած ժամանակ³⁶: Երբ ՄՀ համակարգում փոփոխությունները սկսում են սասանել որոշ պետությունների ստացած ներկայիս օգուտները կամ նոր հնարավորություններ ստեղծել այլ պետությունների համար, ԱՂՀ-ն վերանայվում է՝ արձագանքելու այդ փոփոխություններին³⁷: Այս գործընթացն առաջացնում է հետադարձ կապի մեխանիզմ (feedback loop), որտեղ պետությունները, վերանայելով իրենց ԱՂՀ-ն, նոր ազդակներ են հաղորդում մյուս դերակատարներին՝ ազդելով միջազգային համակարգի շարժընթացի վրա³⁸:

Որոշումներ կայացնողներն իրենց պետության դերի ընկալումները ձևավորում են՝ հիմնվելով ինչպես ինքնության և մշակութային համատեքստի, այնպես էլ միջազգային համակարգում իրենց պետության տեղի և հնարավորությունների գնահատման վրա³⁹: Դրանք նշանակություն են ստանում դերակատարների միջև սոցիալական փոխազդեցության ակտիվ գործընթացի շնորհիվ⁴⁰: Որևէ պետության կողմից, օրինակ, «միջնորդ-ինտեգրատոր» կամ «կամուրջ» ԱՂՀ-ի «որդեգրումը» չի պայմանավորվում միայն նրա ռազմական կամ տնտեսական հզորությամբ: Այն ծագում է համակարգի կամ դրա առանձին

³³ Տե՛ս **Özdamar, Ö.** (2016). Domestic Sources of Changing Turkish Foreign Policy Toward the MENA During the 2010s: A Role Theoretic Approach 1. In *Domestic role contestation, foreign policy, and international relations* (էջ 89-104). Routledge:

³⁴ Տե՛ս **Grossman, M., Schortgen, F., & Friedrichs, G. M.** (2022). Introduction: Defining Roles in a Polycentric World. In *National Role Conceptions in a New Millennium* (էջ 1-22). Routledge:

³⁵ Տե՛ս **Harnisch, S., Frank, C., & Maull, H. W.** (2011). Conclusion: role theory, role change, and the international social order. In *Role Theory in International Relations* (էջ 252-261). Routledge:

³⁶ Տե՛ս **Holsti, K. J.**, նշվ. աշխ., էջ 233-309:

³⁷ Տե՛ս **Walker, S.G.**, նշվ. աշխ., էջ 241-254:

³⁸ Տե՛ս **Grossman, M., Schortgen, F., & Friedrichs G. M.**, նշվ. աշխ., էջ 1-22:

³⁹ Տե՛ս **Breuning, M.**, նշվ. աշխ., 16-35:

⁴⁰ Տե՛ս **Grossman, M., Schortgen, F., & Friedrichs, G. M.**, նշվ. աշխ., էջ 1-22:

սուբյեկտների հետ դինամիկ գործակցությունից և կախված է այն բանից, թե ում է փորձում ինտեգրել կամ կամրջել տվյալ դերակատարը, ինչ շահեր է նա փորձում միատեղել և ինչ արդյունքներ է ակնկալում այդ «առաքելության» իրականացումից:

ԱԴՀ-ի «սոցիալականացումը» գործնականում դրսևորվում է պետությունների դաշինքային (կամ չդաշնակցելու) քաղաքականության միջոցով: Պետության ինքնությունը, արժեքները և ռազմավարական նպատակներն արտացոլող ԱԴՀ-ն խորապես ազդում է դաշինքներ ձևավորելու, դրանց մաս կազմելու կամ չդաշնակցելու քաղաքական ընտրության վրա: Մասնավորապես, իրենց «տարածաշրջանային տերություններ» դիրքավորող պետությունները կարող են դաշինքներ փնտրել որևէ տարածաշրջանում իրենց ազդեցությունն ամրապնդելու կամ ընդհանուր (ենթադրյալ կամ իրական) շահերը պաշտպանելու նպատակով⁴¹: Իրանի՝ Մերձավոր Արևելքի պետական և ոչ պետական տարբեր դերակատարների հետ դաշնակցումը (alignment), մեծապես պայմանավորված նրա «տարածաշրջանային տերության» և «շիա իսլամի պաշտպանի» դերերի ընկալմամբ, դրա վառ արտացոլումն է:

Ընդհակառակը, «ակտիվ անկախ», «կամուրջ» և «անկախ» ԱԴՀ որդեգրողները նպատակ ունեն հավասարակշռված հարաբերություններ պահպանելու բազմաթիվ դերակատարների հետ՝ միաժամանակ խուսափելով ֆորմալ դաշինքներին անդամակցումից: Այսպիսի մոտեցման օրինակ է Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը: Այս երկիրը ձգտում է աշխարհաքաղաքական տարբեր բևեռների հետ ռազմավարական հարաբերությունների պահպանմամբ գերծ մնալ նրանցից որևէ մեկի առաջնորդած ֆորմալ դաշինքներին անդամակցելուց:

Դաշինքները կայանում և զարգանում են անդամ պետությունների միջև ազգային դերի պատկերացումների փոխլրացման և համատեղելիության վրա: Դերային համատեղելիությունը, սակայն, չի բացառում միջդերային հակամարտության պարբերական դրսևորումները և չի նշանակում տարբեր երկրների ԱԴՀ-ների նույնություն: Այն ենթադրում է, որ իրարից տարբեր ԱԴՀ-ները կարող են ներդաշնակ գոյակցել դաշինքի ներսում, հատկապես երբ կա «աշխատանքի հստակ բաժանում»: ԱԴՀ-ից բխող կարգավիճակները և մարտավարությունը ևս կարող են զուգակցվել դաշինքի ընդհանուր ռազմավարության ներքո: Օրինակ, անվտանգության դաշինքի անդամներից որևէ մեկը կարող է դիրքավորվել որպես «առաջատար»՝ ստանձնելով հավաքական անվտանգության հիմնական «բեռը», մինչդեռ մեկ այլ պետություն կարող է որդեգրել «հովանավորյալի» դերը և օգտվել «առաջնորդի» պաշտպանական հովանոցից՝ հավատարիմ մնալով նրա սահմանած ուղենիշներին:

Մեր կարծիքով՝ ԱԴՀ-ի ներգործությունը դաշինքների ձևավորման վրա

⁴¹ Sté u Holsti, K. J, նշվ. աշխ., էջ 233-309:

միակողմանի չէ: Դաշինքի անդամ դառնալով՝ դերակատարը բախվում է այլ անդամների դերային ակնկալիքներին (role expectations) և ուղենիշներին (role prescriptions), որոնք կարող են էապես ազդել նրա ԱԴՀ-ի և արտաքին քաղաքական կարգավիճակի վրա: Այդ ազդեցությունը կարող է լինել ուղղակի. դաշինքը ենթադրում է հավատարմություն որոշակի նորմերի և ակնկալիքների, ինչն աստիճանաբար կարող է կերպափոխել որևէ անդամի ԱԴՀ-ն՝ նրա ստանձնած պարտավորություններին համապատասխան: Անուղղակի առումով դաշինքի հավաքական շահերը և արժեքները, ընդհանուր ինքնության զգացումը ժամանակի ընթացքում կարող են փոխել պետության պատկերացումը միջազգային համակարգում իր դերի և կարգավիճակի վերաբերյալ⁴²: Այս անուղղակի ազդեցությունը կարող է առաջանալ նաև դաշինքի ներսում ընդհանուր փորձառության արդյունքում (օրինակ՝ արտաքին սպառնալիքներին կոլեկտիվ արձագանք, համատեղ ռազմական գործողություններ, ընդհանուր տնտեսական ջանքեր), ինչպես նաև դաշինքի ներսում սոցիալականացման գործընթացի արդյունքում, որտեղ պետությունները «սովորում են» միմյանցից:

Ներքին հիմնապատճառներ

Արտաքին քաղաքական որոշում կայացնողների դիրքորոշումներն ու վարքագիծը խորությամբ ձևավորվում են այն ազգի մշակութային, սոցիալական և քաղաքական կառուցվածքով, որի մեջ նրանք գործում են⁴³: Նրանց ընկալումների և գործողությունների վրա էական ազդեցություն ունեն ազգային ինքնությունը, պատմական փորձառությունները և հասարակության գերակայող արժեքները: Որոշում կայացնողները «ներդրված» են ազգի մշակութային և սոցիալական ինստիտուտներում, և նրանց դերային պատկերացումները ձևավորվում են հենց այդ միջավայրի ազդեցությամբ⁴⁴: Դերերի տեսությունը մշակույթը դիտարկում է որպես վարքագծային փորձառության ձևավորված համակարգ, որը պայմանավորում է որոշում կայացնողների վարքը հատկապես անորոշ իրավիճակներում: Հավաքական մշակութային առանձնահատկությունների վերհանումը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ կանխատեսելու պետության վարքագիծը միջազգային ասպարեզում⁴⁵: Օրինակ, իսլամական հեղափոխությունից հետո Իրանի առաջնորդները իրենց արտաքին քաղաքականությունը կառուցեցին իսլամական հեղափոխության գաղափա-

⁴² Տե՛ս **Maull, H. W.** (2011). Hegemony reconstructed?: America's role conception and its "leadership" within its core alliances. In *Role theory in international relations* (էջ 167-193). Routledge:

⁴³ Տե՛ս **Adigbuo, R.** (2007). Beyond IR theories: The case for national role conceptions. *Politikon*, 34(1), էջ 83-97:

⁴⁴ Տե՛ս **Breuning, M.**, նշվ. աշխ., էջ 16:

⁴⁵ Տե՛ս **Hudson, V. M.** (1999). Cultural expectations of one's own and other nations' foreign policy action templates. *Political Psychology*, 20(4), 767-801:

րախոսության և շիա իսլամի արժեքների վրա՝ ձևավորելով երկու՝ «իսլամական հեղափոխության պաշտպան» և «շիա իսլամի առաջնորդ» նոր ԱՂՀ: Այս դերերն արտացոլում են ոչ միայն առաջնորդների անձնական համոզմունքները, այլև լայնորեն ընդունված ազգային, ինքնութենական ու մշակութային արժեքները:

Առաջնորդի լեգիտիմությունը հաճախ կախված է այն բանից, թե ինչ չափով է նրա արտահայտած ԱՂՀ-ն համահունչ ազգի խորապես արմատացած մշակութային նորմերին, պատմական հիշողությանը և հավաքական ակնկալիքներին⁴⁶: Այս համապատասխանությունը ապահովում է հասարակության աջակցությունը արտաքին քաղաքական ռազմավարություններին:

Շիհը ընդգծում է արտաքին քաղաքականության ձևավորումը որպես սկզբունքորեն մարդկային վարքագիծ դիտարկելու կարևորություն՝ ընդգծելով հոգեբանական և վարքային ասպեկտների ըմբռնման անհրաժեշտությունը⁴⁷: Քաղաքական առաջնորդների անձնական հատկանիշները, արժեքային համակարգը և առաջնորդության ոճը կարող են պայմանավորել ԱՂՀ-ի մեկնաբանման տարբերություններն ու դրա որոշակի հատկանիշների փոփոխությունը կոնկրետ ժամանակահատվածում⁴⁸:

Էլիտաների կողմից ազգային շահերի սահմանմանը և դրանից բխող քաղաքականությունների մշակմանը նախորդում է նախկինում ձևավորված դերերի և գործառույթների ընդունումը կամ վերանայումը⁴⁹: Այս գործընթացում առաջնորդները փորձում են պատասխանել «ո՞վ ենք մենք» հարցադրմանը և սահմանել արտաքին ռազմավարության ուղենիշները, ինչն էլ ուղղորդում է նրանց արտաքին քաղաքական վարքագիծը⁵⁰: ԱՂՀ-ն պայմանավորող արտաքին՝ համակարգային, և ներքին՝ ներքաղաքական, գործոնները մշտապես փոխազդում են: Միջազգային համակարգի փոփոխությունները հաճախ հանգեցնում են ներքաղաքական բանավեճերի՝ կապված արտաքին քաղաքականության առաջնահերթությունների հետ: Քաղաքական էլիտան և քաղաքացիական հասարակությունը կարող են վիճարկել գերակայող ԱՂՀ-ն, եթե համարում են, որ դրանք չեն համապատասխանում պետության շահերին կամ ինքնությանը⁵¹: Այնուամենայնիվ, թեև առաջնորդների անձնական հատկանիշներն ու առաջնորդության ոճը որոշակի ազդեցություն ունեն ԱՂՀ-ի էվոլյուցիայի և կիրառման վրա, դրանք սովորաբար բավարար չեն պետության արտաքին կարգավիճակի կամ դերի հայեցակարգում արմատական փոփոխություններ առաջացնելու համար: ԱՂՀ ձևավորող ներքին և համակարգային գործոնները՝

⁴⁶ Տե՛ս նույն տեղը:

⁴⁷ Տե՛ս **Shih, C. Y.**, նշվ. աշխ.:

⁴⁸ Տե՛ս **Mauil, H. W.**, նշվ. աշխ.:

⁴⁹ Տե՛ս **Shih, C. Y.**, նշվ. աշխ.:

⁵⁰ Տե՛ս **Mauil, H. W.**, նշվ. աշխ.:

⁵¹ Տե՛ս **Grossman, M., Schortgen, F., & Friedrichs, G. M.**, նշվ. աշխ., էջ 11-22:

ազգային ինքնությունը, մշակույթը և պատմական փորձառությունը, ժամանակի ընթացքում հակված են մնալու համեմատաբար կայուն:

Եզրակացություն

Ազգային դերի հայեցակարգերը կարևոր գործիքներ են՝ հասկանալու, թե ինչպես են պետությունները ընկալում իրենց կարգավիճակը միջազգային ապարեզում: Դրանք պետություններին «ի վերուստ տրված» ստատիկ դերեր չեն. դրանց ձևավորման վրա էապես ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններ: Ներքին առումով՝ ԱՂՀ-ն ձևավորվում է մշակույթի, դերային մրցակցության, ընտրանու և առաջնորդի դերային ընկալումների շնորհիվ: ԱՂՀ-ի բնույթը պայմանավորող արտաքին գործոնների շարքում են դաշինքների, միջազգային նորմերի և այլ պետությունների դերային ակնկալիքները: Քանի որ ԱՂՀ-ն ձևավորվում և վերասահմանվում է ներքին ու արտաքին հիմնապատճառների ազդեցությամբ, այն դառնում է պետության վարքագծի ինչպես շարունակականության, այնպես էլ փոփոխության կարեւոր ցուցիչ:

Մեր համոզմամբ՝ ժամանակակից աշխարհաքաղաքական փոփոխությունների և ուժային վերադասավորումների պայմաններում առանձնապես կարևոր է պետությունների դերային հարմարման կարողությունը: Այն թույլ է տալիս խուսափել ներքին անկայունությունից, արդյունավետ արձագանքել արտաքին մարտահրավերներին և առաջ մղել ռազմավարական շահերը: Այսպիսով՝ դերերի գործարկումն ու վերասահմանումը պետություններին հնարավորություն են տալիս ոչ միայն հարմարվելու գլոբալ և տարածաշրջանային կառուցակարգերին, այլև ձևավորելու և փոխակերպելու դրանք:

ԱՂՀ-ի հստակ ըմբռնումը և դրանց հարմարվողականության մեխանիզմների վերլուծությունը թույլ են տալիս բացատրել և կանխատեսել պետությունների արտաքին վարքագիծը, որդեգրած ռազմավարական ուղղությունները և միջազգային համակարգում սեփական կարգավիճակն ամրապնդելու ջանքերը:

СУРЕН ТАДЕВОСЯН – Формирование и трансформация концепций национальной роли в современных международных отношениях. – Цель данной статьи — исследовать значение концепции национальной роли для анализа внешней политики государств, уделяя особое внимание её внутренним и внешним измерениям. В работе рассматривается, каким образом теория ролей вписывается в контексты различных школ международных отношений и как она способствует более глубокому пониманию внешнеполитического поведения. Сравнительный анализ существующих определений концепции национальной роли выявляет ряд существенных ограничений. В частности, обсуждаются недостаточный учёт уровня вовлечённости отдельных акторов, предположение о наличии внутреннего консенсуса в формировании национальной роли, а также игнорирование динамических изменений, происходящих во взаимодействии национальных интересов и внешней среды. В ответ на эти ограничения в статье предлагается обновлённое определение концепции националь-

ной роли, которое подчёркивает её динамичный и коллективный характер. Новое определение включает учёт внутренних культурных, социальных и исторических факторов, а также адаптацию к изменениям во внешнеполитическом окружении. Анализ национальной роли рассматривается как ценный инструмент для объяснения и прогнозирования внешнеполитической стратегии государств, а также для решения теоретических и практических задач в области международных отношений.

Ключевые слова: *ролевая адаптация, геополитические изменения, перераспределение сил, стратегические интересы, глобальные структуры, международные отношения.*

SUREN TADEVOSYAN – *The Formation and Transformation of National Role Conceptions in Contemporary International Relations.* – This paper explores the significance of national role conceptions in analyzing states' foreign policies, focusing on their internal and external dimensions. It examines how role theory aligns with various schools of international relations and contributes to a deeper understanding of foreign policy behavior. A comparative analysis of existing definitions reveals significant limitations, such as insufficient consideration of individual actors' involvement levels, the assumption of internal consensus in forming national roles, and the neglect of dynamic changes between national interests and the external environment. In response, the article proposes an updated definition of national role conceptions, emphasizing its dynamic and collective nature. This new definition incorporates internal cultural, social, and historical factors, as well as adaptation to shifts in the foreign policy environment. Consequently, analyzing national roles is presented as a valuable tool for explaining and predicting states' foreign policy strategies and for addressing theoretical and practical challenges in international relations.

Key words: *role adaptation; geopolitical changes; power shifts; strategic interests; global structures; international relations*

«ՄԵԾ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ». ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԻԽՈՏՈՄԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ* 

Երևանի պետական համալսարան

Հոդվածի շրջանակներում քննարկվում են համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների նոր մեզամիտումներից մեկի՝ «Մեծ եվրասիական գործընկերության» ձևավորման տեսահայեցակարգային հիմքերն ու գլոբալ ինտեգրացիոն այդ գործընթացին Հայաստանի Հանրապետության մասնակցության հեռանկարները: Հետազոտության նպատակներն ու խնդիրները ներառում են արդի գլոբալ աշխարհակարգային փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրությունը, «Մեծ եվրասիական գործընկերության» գաղափարի հայեցակարգայնացումն ու դրա գործնական կիրառելիության դրսևորումները, փոքր պետությունների, մասնավորապես Հայաստանի Հանրապետության ինտեգրացիոն և դեզինտեգրացիոն ներուժի վերլուծությունը: Մասնավորապես, հիմնավորվում է այն թեզը, որ «Մեծ եվրասիական գործընկերության» կայացումը լայն առումով համաշխարհային տնտեսության «ծանրության կենտրոնը» եվրատլանտյան կամ անգլոսաքսոնական առանցքից տեղափոխում է դեպի արևելք՝ Եվրասիական մայրցամաքի ռազմավարական խորություններ: Նման փոխակերպման պարագայում զուգահեռաբար փոփոխության են ենթարկվում նաև Մեծ եվրասիական տարածքի բիֆուրկացիոն կետերը (կոնֆլիկտային օջախները) ու բուֆերային գոտիները: Հարավային Կովկասը, մասնավորապես Հայաստանը, գտնվում է բիֆուրկացիոն լարվածության կիզակետում, իսկ հայոց պետականությունն ու հայ հասարակությունն ընդհանրապես կանգնած են բիֆուրկացիոն կետ VS բուֆերային գոտի դիֆուսիոնական ընտրության առջև:

Բանալի բառեր – փոփոխվող աշխարհակարգ, «Մեծ եվրասիական գործընկերություն», սոցիալական բիֆուրկացիա, բուֆերային գոտի, կանոնավոր ատրակտոր, անկանոն ատրակտոր

* **Խաչիկ Գալստյան** – քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր

Хачик Галстян – доктор политических наук, профессор кафедры политологии ЕГУ

Khachik Galstyan – Doctor of Political Sciences, Professor at YSU Chair of Political Science

Էլ. փոստ՝ khgalstyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0001-6306-0754>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 06.09.2024

Գրախոսվել է՝ 10.11.2024

Հաստատվել է՝ 03.12.2024

© The Author(s) 2024

Ներածություն

Արդի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերություններում նկատվող տեղաշարժերն ու աշխարհակարգային փոխակերպումները հանգեցնում են նոր մեզամիտումների (մեզաթրենդ), որոնք լայն առումով տեղավորվում են բիֆուրկացիոն դարաշրջանի¹ և հասարակության զարգացման օրինաչափությունների մեջ: Բանն այն է, որ համաշխարհային քաղաքագիտական դիսկուրսում երկար ժամանակ տիրապետող էր հասարակական-քաղաքական փոխակերպումների ինչպես ուսումնասիրման, այնպես էլ ընթացքի բացատրման մոդեռնիստական կամ գծային մոտեցումը, որը հանգեցնում էր մեխանիկական դետերմինիզմի և միաբևեռ աշխարհակարգի հաստատման անխուսափելիության հիմնավորման փորձերի²: Միաժամանակ, XX դարաշրջանի զարգացումներն ի ցույց դրեցին մոդեռնիզմի ժամանակաշրջանի տեսահայեցակարգային և գաղափարաքաղաքական ուղենիշների սահմանափակվածությունն ու քրոնոտոպային անհամապատասխանությունը³: Գիտատեխնիկական առաջընթացի բացարձակացում, մարդկային գործունեության գերոացիոնալացում, քաղաքական զարգացման գծային մոդելների, մենախոսային հաղորդակցության համակարգերի լայն կիրառում, ամբողջատիրական դիկտատուրաների հաստատում, սոցիալական մեծ ցնցումներ և էկոլոգիական աղետներ. ահա հասարակության ինդուստրիալացման հետևանքով առաջացած «սև խոռոչների» ոչ լրիվ ցանկը:

Հետդասականության և պոստմոդեռնիստական աշխարհընկալումների ու հարացուցային պատկերացումների շրջանակներում վերոնշյալ բացասական միտումներին ավելանում են նորերը: Մասնավորապես, XXI դարի երկրորդ տասնամյակում, համերկրային մասշտաբի աշխարհաքաղաքական, աշխարհատեսական ու դրանցով պայմանավորված՝ նաև առանձին պետությունների ներսում քաղաքական գործընթացները ձեռք են բերում սրընթաց արագություն ու խելահեղ տեմպ, որոնք փոփոխվում են ժամ առ ժամ, իսկ անորոշությունները դարձել են քաղաքական իրականության արտացոլման ու ընկալման բնական վիճակ: Հետևաբար, ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգի հարացույցի, գլոբալ անորոշությունների, հասարակական-քաղաքական ճգնաժամերի պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել նոր զարգացող, բարդ ինքնակազմակերպվող⁴ մեծ (Եվրասիական գործընկերություն) և փոքր (Հայաստանի Հանրապետություն) համակարգերի փոխազդեցությունները բիֆուրկացիոն գործընթացների համատեքստում:

¹ Տե՛ս **Ласло Э.** Век бифуркации. Постигание изменяющегося мира. М., 1995:

² Տե՛ս **Фукуяма Ф.** Конец истории и последний человек, М., 2007, էջ 84:

³ Տե՛ս **Галстян Х.** Как вырваться из паутины? Проблема политического диалога в постмодернистском дискурсе современности // Белорусская Думка, 2015/2, էջ 50:

⁴ Տե՛ս **Пригожин И., Стенгерс И.** Порядок из хаоса: новый диалог человека с природой (под общ. ред. В. И. Аршинова, Ю. Л. Климонтовича и Ю. В. Сачкова), М., 1986:

«Մեծ եվրասիական գործընկերություն». գաղափարի հայեցակարգայնացումը

Ինչպես արդեն նշվեց, համաշխարհային զարգացման գծային, միաբնեռ զլորալիզացիայի հայեցակարգին փոխարինելու են գալիս ոչ գծային, բազմաբնեռ ռեգիոնալիզմի հարացույցերը: Դրանց թվին է անշուշտ պատկանում «Մեծ եվրասիական գործընկերության» հայեցակարգը: Այն ռուսական փորձագիտական շրջանակներում սկսեց շրջանառվել 2012-2013 թթ. -ից, որի նպատակը ՌԴ գործընկերներին բազմակողմ փոխգործակցության և Ռուսաստանի հատկապես ասիական հատվածի զարգացման համար ավելի գրավիչ առաջարկների ներկայացումն էր⁵: Օրինակ՝ Ս. Կարագանովը «Մեծ Եվրասիան» համարում է միջպետական հարաբերությունների մայրցամաքային համակարգ, որը հիմնված է փոխվստահության և անվտանգության համատեղ ձգտումների վրա: Այն, ըստ էության, աշխարհառազմավարական նոր ընդհանրություն հաստատելու շարժում է, որը կոչված է հաղթահարելու դեռ Սառը պատերազմից հետո մնացած բաժանարար գծերը, կանխարգելելու նոր կոնֆլիկտների առաջացումն ու կարգավորելու գործընկեր պետությունների միջև առկա վիճարահույց հարցերը⁶: Քաղաքական բարձր մակարդակում ՌԴ նախագահ Վ. Պուտինը «Մեծ եվրասիական գործընկերության» մասին բարձրաձայնեց 2015 թ.: Դաշնային ժողովին հղած իր ամենամյա ուղերձում Վ. Պուտինը ռազմավարական պլանավորման շրջանակներում քննարկման ներկայացրեց ԵԱՏՄ հիմքի վրա տնտեսական ավելի լայն գործընկերության ձևավորման, Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) և Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի (ASEAN) հետ նոր մեգախանազմի գործարկման հնարավորության հարցը⁷: Իսկ արդեն Սանկտ Պետերբուրգի XX տնտեսական համաժողովի շրջանակներում խոսելով ԵԱՏՄ մասնակցությամբ ավելի լայն ինտեգրացիոն ձևաչափի մասին՝ ՌԴ նախագահն այն ներկայացրեց «Մեծ եվրասիական գործընկերության» ստեղծման գաղափարի տեսքով⁸: Վ. Պուտինի կարծիքով՝ «Եվրասիական տնտեսական միությունը կարող էր դառնալ ինտեգրացիոն ավելի լայն շղթայի ձևավորման կենտրոններից մեկը, որի շրջանակներում կարող էին լուծվել տեխնոլոգիական ավելի ընդգրկուն խնդիրներ, ինչպես նաև տեխնոլոգիական զարգացման գործում խրախուսել և

⁵ St' u **Лихачева А.** Большое Евразийское партнерство: в поисках новых импульсов, <https://roscongress.org/materials/bolshoe-evraziyskoe-partnerstvo-v-poiskakh-novykh-impulsov/>, (մուտք՝ 26. 07. 2024):

⁶ St' u **Пакулин В.** Процессы сопряжения китайского проекта «Один пояс – один путь» и ЕАЭС в рамках концепции «большого евразийского партнерства» // Вестник Томского государственного университета. История. 2022, № 76, էջ 51:

⁷ St' u Послание Президента Федеральному Собранию, 03.12. 2015. <http://kremlin.ru/events/president/News/page/409> (մուտք՝ 28. 07. 2024):

⁸ St' u Пленарное заседание Петербургского международного экономического форума. <http://kremlin.ru/events/president/news/5217> (մուտք՝ 28. 07. 2024):

ներառել նոր մասնակիցներ»⁹: Մասնավորապես, ըստ ՌԴ նախագահի, «Մեծ եվրասիական գործընկերության» մաս կարող էին կազմել Չինաստանը, Հնդկաստանը, Պակիստանը, Իրանը, ԱՊՀ երկրները և այն պետությունները, որոնց հետ արդեն իսկ ձևավորվել էին գործընկերային սերտ փոխհարաբերություններ:

Անցած տարիների ընթացքում «Մեծ եվրասիական գործընկերության» հայեցակարգն աստիճանաբար զարգացում ապրեց՝ իր հաստատուն տեղը զբաղեցնելով ՌԴ արտաքին քաղաքականության ռազմավարական փաստաթղթերում¹⁰: Մասնավորապես, 2023թ. ընդունված ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգն ամրագրում է, որ «աշխարհում տեղի են ունենում հեղափոխական փոփոխություններ, շարունակվում են ավելի արդար ու բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման գործընթացները...», «իսկ համաշխարհային տնտեսության մեջ տեխնոլոգիական նոր հենքով տեղի ունեցող կառուցվածքային փոխակերպումները, ազգային ինքնագիտակցության աճը, մշակութային-քաղաքակրթական բամբակումությունն ու այլ օբյեկտիվ գործոններ իրենց հերթին արագացնում են զարգացման պոտենցիալի վերաբաշխումը հոգուտ աշխարհատնտեսական զարգացման և աշխարհաքաղաքական նոր ձևավորվող կենտրոնների»¹¹: Անշուշտ, «Մեծ եվրասիական գործընկերությունը» հավակնում է դառնալ այդպիսի կենտրոններից մեկը: Ակներև է նաև ՌԴ ձգտումը Մեծ եվրասիական տարածքում կայունության, փոխվստահության, խաղաղության և զարգացման համամայրցամաքային միավորում ստեղծելու գործում, որը կմիավորի ԵԱՏՄ, ՇՀԿ, Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի կազմում գտնվող երկրների ողջ ներուժը Եվրասիական տարածաշրջանի անվտանգության և կայուն զարգացման ապահովման գործում¹²:

Ինչպես երևում է, գործնական քաղաքականության հարթությունում «Մեծ եվրասիական գործընկերության» մեզանախագիծն աստիճանաբար «միս և արյուն» է ստանում: Միաժամանակ, շատ են նաև այդ գաղափարը կյանքի կոչելու կոնցեպտուալ հարցադրումները: Առաջինը վերաբերում է հենց «Մեծ Եվրասիա» ձևակերպմանը: Ավանդաբար, հատկապես ռուսական քաղաքական մտքի շրջանակներում ձևավորված եվրասիականության աշխարհաքաղաքական դպրոցի ներկայացուցիչները համարում էին, որ Հին աշխարհը բաղկացած է ոչ թե Եվրոպա և Ասիա առանձին աշխարհամասերից, այլ երրորդ՝ Եվրասիա մայրցամաքից, որի աշխարհագրական սահմանները հիմնականում համընկնում էին Ռուսական կայսրության, իսկ հետագայում՝ Խորհրդային Միության

⁹ Նույն տեղում:

¹⁰ Стратегия внешней политики Российской Федерации (утверждена Президентом Российской Федерации В.В.Путиным 31 марта 2023 г.), <https://www.mid.ru/ru/detail-material-page/1860586/>, Указ Президента Российской Федерации от 02.07.2021 г. № 400 О Стратегии национальной безопасности Российской Федерации, <http://www.kremlin.ru/acts/bank/47046/page/1> (մուտք՝ 26.07.2024):

¹¹ Նույն տեղում:

¹² Տե՛ս նույն տեղը:

սահմանների հետ¹³։ Թեև որոշ հետազոտողներ համարում են, որ Եվրասիայի ռուսական-խորհրդային ընկալումներն ավելի շատ համապատասխանում են «Փոքր Եվրասիա» եզրույթին, որն ավելի մեծ ամբողջի ընդամենը մի մասն է, և հենց այդ հսկայական տարածքում կատարվող գործընթացները կկանխորոշեն XXI դարի աշխարհի պատկերը¹⁴։ Փաստորեն, «Մեծ եվրասիական գործընկերության» հայեցակարգը առաջին անգամ դուրս է գալիս դասական եվրասիականության սահմաններից և փորձում է ստեղծել համաշխարհային տնտեսության այլընտրանքային նոր մոդել, որը հենվում է ոչ այնքան համաշխարհային օվկիանոսային առևտրի, որքան անխափան գործող ցամաքային նոր կոմունիկացիոն համակարգերի կառուցման փիլիսոփայության վրա։ Պատահական չէ, որ փոփոխվող աշխարհակարգի պայմաններում եվրասիական տարածքի մի շարք երկրներ զուգահեռաբար առաջ են քաշում սեփական ռազմավարական կոմունիկացիոն նախագծերը, ինչպես օրինակ՝ հնդկական «Mausam», պակիստանյան «Vision 2025», մոնղոլական «Prairie Road», ղազախական «Bright Road», թուրքական «Middle Corridor» նախագծերը¹⁵։ Սակայն դրանցից ամենախոշորները շարունակում են մնալ չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» և ռուսական «Մեծ եվրասիական գործընկերություն» նախագծերը։

Ի դեպ, դեռ Պ. Մավիցկին էր Ռուսաստան-Եվրասիայի տնտեսական ինքնաբավության և մրցունակության մոդելը տեսնում ոչ այնքան դեպի տաք ծովեր Ռուսաստանի ելքերի ապահովման և ուրիշների «օվկիանոսային քաղաքականության» կրկնօրինակման, որքան Եվրասիան որպես «մայրցամաք-օվկիանոս» ընկալելու ու Ռուսաստանի տնտեսության մայրցամաքային աշխարհագրական տրամաբանությանը համապատասխան կառուցելու մեջ¹⁶։ Այս տեսանկյունից «Մեծ եվրասիական գործընկերության» կայացումը համաշխարհային տնտեսության «ծանրության կենտրոնը» կարող է տեղափոխել եվրատլանտյան կամ անգլոսաքսոնական առանցքից դեպի արևելք՝ դեպի Եվրասիական մայրցամաքի ռազմավարական խորություններ։ Նման փոխակերպման պարագայում զուգահեռաբար փոփոխության են ենթարկվում նաև Մեծ եվրասիական տարածքի բիֆուրկացիոն կետերը (կոնֆլիկտային օջախներ) ու բուֆերային գոտիները։ Դրանք արդեն տեղաշարժվում են դեպի հարավ՝ Հ. Մակկինդերի մատնանշած ներքին աղեղի երկայնքով¹⁷։

¹³ St' u Савицкий П. Географические и геополитические основы евразийства. // Континент Евразия, М., 1997, էջ 40-42:

¹⁴ St' u Тренин Д. Метаморфозы большой Евразии, <https://carnegieendowment.org/posts/2013/01/revising-the-concept-of-eurasia?lang=ru¢er=russia-eurasia> (մուտք՝ 26.07.2024):

¹⁵ St u Лин Чу. Интеграция инициативы «Один пояс, один путь» и Большого евразийского партнерства: предпосылки, мотивы и приоритеты реализации // Социально-политические науки. 2021. Т. 11. № 1, էջ 97:

¹⁶ St' u Савицкий П. Континент-океан: Россия и мировой рынок, <http://gumilevica.kulichki.net/SPN/spn08.htm>

¹⁷ St' u Маккиндер Х. Географическая ось истории. // Полис, 1995/4, էջ 162-169:

Բանն այն է, որ ինչպես անցյալում, այնպես էլ հիմա «Մեծ Եվրասիան» քաղաքակրթական ու հատկապես էթնոքաղաքական խիստ բազմազան խճանկարային պատկեր ունի, որի տնտեսական, այնուհետ քաղաքական ինտեգրման փորձաքարը, անշուշտ, դառնալու է «հին» և «նոր» կոնֆլիկտային օջախների, «քաղաքակրթական խզվածքների»¹⁸ հատման տիրույթում Մեծ Եվրասիական անվտանգային ընդհանուր միջավայրի կառավարման ունակությունը: Այս տեսանկյունից ամենևին պատահական չէ ՌԴ ԱԳՆ ղեկավար կազմի հետ 2024 թ. հունիսի 14-ի հանդիպման ժամանակ Վ. Պուտինի արձանագրումն առ այն, որ Եվրասիական անվտանգության համակարգը փլուզման փուլում է, և այն փաստացի բացակայում է¹⁹: Այդ իրավիճակն իր հերթին բոլոր շահագրգիռ կողմերից պահանջում է Եվրասիական տարածաշրջանում անվտանգության նոր հարացույցի ձևավորման ուղղությամբ կոնկրետ աշխատանքների իրականացում: Մեր ժամանակների հրամայականն է՝ մոտալուտ ապագայում Եվրասիական մեծ տարածքում ձևավորել հավասար և անբաժանելի անվտանգության, փոխշահավետ համագործակցության և զարգացման նոր համակարգ:

Այս համատեքստում է, որ առաջ են գալիս փոքր երկրների մեծ մարտահրավերներն ու Եվրասիական տարածաշրջանի սև խոռոչներում բիֆուրկացիոն կետերի լարվածության աճի միտումները, որոնցից մեկն էլ Հարավային Կովկասն է ու մասնավորապես Հայաստանը:

Փոքր երկրի մեծ խնդիրները. Հայաստանը «Մեծ Եվրասիական գործընկերության» համատեքստում

Ասիական, թե՛ եվրոպական ինքնություն, Արևելք, թե՛ Արևմուտք աշխարհաքաղաքական կողմնորոշման հարցը հազարամյակներ շարունակ ուղեկցել է հայ ժողովրդին իր քաղաքական պատմության երկարամյա ընթացքում: Աշխարհի ամենահին ազգերից մեկը լինելով հանդերձ՝ հայի յուրաքանչյուր սերունդ կանգնած է եղել ինքնաճանաչման, սեփական ինքնության պահպանման և գոյատևման էկզիստենցիալ խնդիրների առջև: Ընդ որում հայ իրականության մեջ նախորդ ու հաջորդ պատմաշրջանների միջև խզումն այնքան խորն է եղել, որ ամեն նոր դարաշրջանի կենտրոնում կանգնած գործիչը նախ ջանքեր է թափել վերականգնելու նախորդ պատմաշրջանի ձեռքբերումները, նորովի մշակել, ուղենշել գալիքի, ապագայի հիմնապահանջները, զրոյից սկսել, վերականգնել, հաղթահարել, յուրացնել անցյալի արժեքները, ապա կերտել նորը²⁰: Ա. Թոյնբին նշում է, որ պատմությունը կրկնվելու սովորություն

¹⁸ Տե՛ս Хантингтон С. Столкновение цивилизаций, М., 1996, էջ 41:

¹⁹ Տե՛ս Встреча президента РФ с руководством МИД России, <http://kremlin.ru/events/president/news/74285>

²⁰ Տե՛ս Խ. Գալստյան, Հետպատերազմյան Status Quo-ն Արցախում. հայության նոր ռազմավարական մշակույթի ձևավորման հրամայականը // Գիտական Արցախ, Եր., 2021/3(10), էջ 149:

ունի²¹, իսկ Հեգելն ավելացնում է, որ պատմությունը մի բան է միայն սովորեցնում. մենք պատմությունից ոչինչ չենք սովորում: Այս պոստուլատներն հատկապես ակտուալ են արդի հայ կառավարող էլիտայի և հասարակության քաղաքական կողմնորոշումներում:

Բանն այն է, որ Հայկական լեռնաշխարհը, որը համարվում է հայ ազգի ձևավորման կենսատարածքը կամ եվրասիականների բնորոշմամբ՝ «զարգացման տեղը»²², աշխարհագրորեն ցամաքային քաղաքակրթության կամ Հ. Մակկլինդերի բնորոշմամբ՝ «Hearthland»²³-ի մաս է կազմում: Իհարկե, պատմական մի կարճ հատվածում՝ Արտաշեսյանների, հատկապես Տիգրան Մեծի կառավարման ժամանակաշրջանում, Մեծ Հայքի սահմանները հասնում էին մինչև Սև և Միջերկրական ծովեր, սակայն հայ ժողովրդի նստակյաց կենսակերպը, մշակույթը, մենթալիտետն ու վարքաբանությունը տիպիկ «ցամաքային» կամ այսպես կոչված «եվրասիական» քաղաքակրթական սկիզբ ունեն: Միաժամանակ, հայկական գործոնը տարածաշրջանում մշտապես կարևորվել է որպես անցումային կամ բուֆերային գոտի Արևմուտքից Արևելք կամ հակառակ ուղղությամբ քաղաքակրթական մեծ էքսպանսիաների ժամանակ: Առավել կործանարար հետևանքներ է ունեցել և ունենում հայ ժողովրդի քաղաքակրթական ընթացքը, երբ մենք հայտնվում ենք աշխարհաքաղաքական շահերի բախման կիզակետում: Այս օրինաչափությունների գիտակցումն առնվազն ենթադրում է, որ աշխարհաքաղաքական կողմնորոշման կամ դաշնակիցների ընտրության դիլեմաների հարցում մեր մոտեցումները պետք է առնվազն համահունչ լինեն «Մեծ եվրասիական գործընկերությանը» լիովին ինտեգրվելու քաղաքականության որդեգրմանը: Այդպես էր ՀՀ անկախացումից ի վեր, երբ Հայաստանը ակտիվորեն մասնակցում էր ԱՊՀ, ՀԱՊԿ, ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացներին: Սակայն վերջին տարիներին, գլոբալ աշխարհակարգային փոփոխությունների համատեքստում, որի հետևանքով էականորեն սրվեցին ԱՄՆ-հավաքական Արևմուտք և Ռուսաստան+միջազգային մեծամասնություն հարաբերությունները, Հայաստանը դարձել է Եվրասիական տարածքի բիֆուրկացիոն թեժ կետերից մեկը: Ինքնաբավ անվտանգության մոդելի փլուզումից հետո, որը կառուցված էր Հայաստանի ու Արցախի անվտանգության համակարգերի սինխրոնացման և անվտանգության անբաժանելիության սկզբունքների վրա, ՀՀ-ն այժմ գտնվում է արտաքին քաղաքականության, տնտեսության և անվտանգության դիվերսիֆիկացիայի փուլում: Մարմնով և իր «ազգային տան հիմնասյուն-արմատներով» մխրճված լինելով Եվրասիայում՝ ՀՀ կառավարող էլիտան հայացքն ուղղել է դեպի Արևմուտք՝ «ազգային տան շքամուտքն ու պատուհանները» բացելով եվրաստլանտիստ-

²¹ Տե՛ս **Тойнби А.** Постигание истории: Сборник, М., 2010:

²² Տե՛ս **Нартов Н., Нартова В.** Геополитика. М., 2007, էջ 130:

²³ Տե՛ս **Маккиндер Х.**, նշվ. աշխ.::

ների ու ՆԱՏՕ-ի առջև: Արտաքին ու ներքին հախտոն, քառսային քաղաքական որոշումները հայ հասարակությանը կանգնեցրել են սոցիալական բիֆուրկացիայի շեմին: Ինչպե՞ս է այն դրսևորվում: «Սոցիալական բիֆուրկացիան» բնութագրվում է որպես հասարակության մի վիճակ, երբ սոցիալ-քաղաքական իրականության օբյեկտիվ և սուբյեկտիվ ընկալումների միջև առաջանում են խորը հակասություններ և ճգնաժամեր²⁴, երբ հասարակությունը հայտնվում է համակարգի քայքայման, անկայունության և անորոշության փուլում, որոնք մի կողմից իրավիճակների փոփոխության օբյեկտիվ անհրաժեշտության, մյուս կողմից այդ իրավիճակներից դուրս գալու ելքերի երկակի ընտրության առջև են կանգնեցնում հասարակությանը²⁵:

Հիմա, օրինակ ՀՀ տնտեսական շահերի տեսանկյունից 2015 թ. հիմնված ԵԱՏՄ-ն, որին մասնակցում է ՀՀ-ն, օբյեկտիվորեն ցույց է տվել իր արդյունավետությունը, սակայն հայ հասարակության սուբյեկտիվ ընկալումներում քարոզվում է ՀՀ տնտեսական դիվերսիֆիկացման, ԵՄ-ի հետ վիզաների ազատակալման ու մոտալուտ ապագայում ՀՀ-ի՝ ԵՄ-ին անդամակցության հեռանկարը: Ազգային անվտանգության ապահովման համատեքստում, 1992 թ.-ից լինելով ՀԱՊԿ լիիրավ անդամ, ՀՀ այժմյան ղեկավարությունը ցուցադրաբար խզում է հարաբերությունները, բոլորտում է հավաքական անվտանգության այդ կառույցի աշխատանքները: Ներքին քաղաքականության ոլորտում հասարակական լարվածության և քաղաքացիական ընդվզման յուրաքանչյուր փորձ կապվում է ռուսական «հետքի» ու գործակալական ցանցի գործունեության հետ, որն էլ էական ազդեցություն է ունենում հայ հասարակության արտաքին քաղաքական նախապատվությունների սուբյեկտիվ ընկալումներում: Մասնավորապես, վերջին սոցիալարցումների տվյալներով՝ Ռուսաստանը Հայաստանի բարեկամ երկրների շարքում զբաղեցնում է 8-րդ տեղը՝ 29,8% վարկանիշով, այն դեպքում, երբ 2015 թ.-ին ՌԴ-ին բարեկամ երկիր էր համարել հարցվածների 86%-ը²⁶:

Այս ամենը վկայում է, որ Հայաստանը կարող է վերածվել ոչ թե համագործակցության, այլ մրցակցության թատերաբեմի, դինամիկ հավասարակշռության և կայունության կամ «պարզ կանոնավոր ատրակտորի» վիճակից անցում կատարել դեպի անկայունությամբ, անորոշությամբ աչքի ընկնող «անկանոն կամ ֆրակտալ ատրակտորի»²⁷ վիճակի, որի արտաքին քաղաքական վայրիվերումները, հախտոն ու քառսային ցատկերը կարող են հանգեցնել ողջ Հարավային Կովկասի բիֆուրկացիոն պոտենցիալի աճին ու Մեծ եվրասիական տարածքի ապահիերարխիայնացմանը: Անվտանգության դեֆիցիտը մեծ մարտահրավեր է, որը

²⁴ Տե՛ս **Черепанов А.** Развитие через нестабильность: синергетический подход в социальной философии. // Вестник Санкт-Петербургского университета, Серия 6, 2006/1, էջ 76-82:

²⁵ Տե՛ս **Лотман Ю.** Культура и взрыв. М., 1992, էջ 192:

²⁶ Տե՛ս «Որո՞նք են ՀՀ բարեկամ և ոչ բարեկամ երկրները ըստ քաղաքացիների», <https://www.aysor.am/am/news/2024/04/03/> (մուտք՝ 05.08.2024):

²⁷ Ավելի մանրամասն տե՛ս **Черепанов А.**, նշվ. աշխ., էջ 77-78:

պետք է հաղթահարվի «Մեծ եվրասիական գործընկերության» համատեքստում: Փաստացի, «Մեծ Եվրոպային» (ԵԱՀԿ), որն առաջ էր քաշում «Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ» անվտանգության ապահովման հայեցակարգը, փոխարինելու է գալիս «Մեծ եվրասիական գործընկերության» զարգացման, համագործակցության և «Ջակարտայից մինչև Լիսաբոն» անվտանգության նոր հարացույցը:

Ամփոփելով հարկ է ընդգծել, որ «Մեծ Եվրասիայի» և դրա հիմքի վրա «Մեծ եվրասիական գործընկերության» ձևավորման հարացույցը դեռևս տեսահայեցակարգային փորձարկման փուլում է, որի հաջողությունը որոշակի առումով կախված է նաև Մեծ եվրասիական տարածքի փոքր «սև խոռոչների» բիֆուրկացիոն պոտենցիալը առնվազն բուֆերային տրանսֆորմացիայի փոխակերպելու կարողությունից:

ХАЧИК ГАЛСТЯН – «Большое Евразийское партнерство»: дихотомический выбор Армении. – В рамках статьи обсуждаются теоретико-концептуальные основы формирования концепции «Большого Евразийского партнерства» и перспективы участия Республики Армения в этом глобальном интеграционном мегатренде. Цели и задачи исследования включают изучение динамики трансформации глобального миропорядка, концептуализацию идеи «Большого Евразийского партнерства» и ее практического воплощения, анализ интеграционного и дезинтеграционного потенциала малых государств, вовлеченных в глобальных мегапроектах.

В частности, обосновывается тезис о том, что создание Большого Евразийского Партнерства в широком смысле смещает «центр тяжести» мировой экономики с евроатлантической или англосаксонской оси на восток, в стратегические глубины Евразийского континента. При такой трансформации параллельно претерпевают изменения также точки бифуркации (очаги конфликтов) и буферные зоны Большого Евразийского пространства. Южный Кавказ, особенно Армения, находится в центре бифуркационной напряженности, а армянская государственность и армянское общество в целом стоят перед дихотомическим выбором между точкой бифуркации и буферной зоной.

Ключевые слова: *изменяющийся миропорядок, «Большое Евразийское партнерство», социальная бифуркация, буферная зона, регулярный аттрактор, нерегулярный аттрактор*

KNACHIK GALSTYAN – “Greater Eurasian Partnership”: Armenia’s Dichotomous Choice. – The article discusses the theoretical and conceptual foundations of the formation of the concept of the “Greater Eurasian Partnership” and the prospects for the participation of the Republic of Armenia in this global integration megatrend. The goals and objectives of the study include studying the dynamics of the transformation of the global world order, conceptualizing the idea of “Greater Eurasian Partnership” and its practical implementation, analyzing the integration and disintegration potential of small states involved in global mega-projects.

In particular, the thesis is substantiated that the creation of the Greater Eurasian Partnership in a broad sense shifts the “center of gravity” of the world economy from the Euro-Atlantic or Anglo-Saxon axis to the east, into the strategic depths of the Eurasian continent. With such a transformation, bifurcation points and buffer zones of the Greater Eurasian space also undergo changes in parallel. The South Caucasus, especially Armenia, is at the center of bifurcation tensions, and Armenian statehood and Armenian society as a whole are faced with a dichotomous choice between the bifurcation point and the buffer zone.

Key words: *changing world order, “Greater Eurasian Partnership”, social bifurcation, buffer zone, regular attractor, irregular attractor*

DECARBONIZATION POLICY IN THE EURASIAN ECONOMIC UNION: MEETING THE CHALLENGE OF GLOBAL CLIMATE CHANGE (comparative analysis)

VAHE DAVTYAN , SILVA KHACHIKYAN* 
Russian-Armenian University

The article examines the issues of decarbonization in the member states of the Eurasian Economic Union in the context of global challenges of climate change. The international regime for reducing greenhouse gas emissions into the atmosphere is analyzed. Its impact on the global political agenda is determined. It is established that one of the main challenges to reducing emissions is the development of "green" types of energy, which should be understood as not only renewable energy sources, but also natural gas and nuclear energy. Through a comparative analysis of both energy systems and national programs for reducing greenhouse gas emissions of the EAEU member states, their potential for implementing the "energy transition" and decarbonization is determined. The challenges of economic development in the EAEU are shown through the prism of the Paris Agreement on Climate Change. Recommendations are given for improving cooperation between the EAEU member countries in the field of decarbonization and synchronizing strategic approaches in the field of climate management and sustainable development.

Key words: *decarbonization, climate, greenhouse gases, international regime, Paris Agreement, EAEU, sustainable development*

Introduction

Environmental issues have become one of the determining factors in world politics since the 1970s. The correlation between anthropogenic activities and global warming has become a subject of scientific and political discussions and a key factor in the formation of prior directions for the socio-economic development. The international climate regime was formed gradually, having gone through a difficult path from the United

* **Vahe Davtyan** – Sc. D in Political Science, Professor, Russian-Armenian University

Վահե Դավթյան – քաղաքական գիտությունների դոկտոր, Հայ-ռուսական համալսարանի պրոֆեսոր

Варе Давтян – доктор политических наук, профессор Армяно-Российского университета

E-mail: vahe.davtian@gmail.com. ORCID: <https://orcid.org/0000-0002-0848-3436>.

Silva Khachikyan – PhD in Political Science, Researcher, Russian-Armenian University

Միլվա Խաչիկյան – քաղաքական գիտությունների թեկնածու, Հայ-ռուսական համալսարանի հետազոտող

Сильва Хачикян – кандидат политических наук, исследователь Армяно-Российского университета

E-mail: khachikyans@gmail.com. ORCID: <https://orcid.org/0000-0003-3604-1392>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 12.08.2024

Գրախոսվել է՝ 31.10.2024

Հաստատվել է՝ 03.12.2024

© The Author(s) 2024

Nations Framework Convention on Climate Change (UNFCCC) to the Paris Agreement and still remains vulnerable. The growing aggravation of confrontation between global powers still calls into question the further interaction of a number of states on key issues of the global climate agenda.

A significant contribution to the greening of the world economy and the formation of new trends in the development of the global energy system was made by the Paris Agreement, adopted as part of COP-21 in order to combat climate change and reduce greenhouse gas (GHG) emissions. Currently, 194 countries have joined the Paris Agreement. The agreement emphasizes efforts to limit temperature increase to 1.5°C above pre-industrial levels, thereby reducing the risk of climate change. The legal status of the Paris Agreement can be called hybrid: it combines a top-down approach, when obligations are imposed on states, and a bottom-up approach, when many issues are left to the discretion of national states¹. The signatories of the Agreement agreed to work towards a common goal of limiting temperature rise to 1.5°C above pre-industrial levels as a measure to support the most vulnerable countries.

Unlike the previous international treaties on climate control imposing obligations and responsibilities on a limited number of countries, the Paris Agreement abolished the principle of differentiated responsibilities, calling the international community to cooperate for managing the climate change issue. According to the Paris Agreement, the concept of “Nationally Determined Contributions” (NDC) was introduced, which can be defined as a set of obligations of states to achieve the goals of the Agreement which should “be implemented in a facilitative, non-intrusive, non-punitive manner, respectful of national sovereignty”². The national contribution to climate protection is determined at the national level according to a country’s capabilities. Thus, as part of COP-26, more than 140 countries pledged to achieve zero emissions.

In the context of the contemporary approach of universal responsibility for climate change, the problem of green transformation of energy systems becomes especially relevant. Although industrial processes, agriculture, transport and other life spheres also generate GHG emissions, the majority of emissions globally - about 70% - are associated with energy production and consumption. To address climate risks, the global energy industry is going through a long-term stage of “green transition”.

The decarbonization of the global energy system is carried out in different ways, including the introduction of renewable energy sources (RES), synergistic combinations combining the capabilities of RES, nuclear energy and fossil fuel generation. In turn, the development of renewable energy makes it possible to increase the level of energy independence, since it significantly reduces the dependence of states on external fuel supplies, thereby strengthening the energy security system³.

Energy systems are evolving towards universal access to clean energy. The Ukrainian crisis has caused an energy crisis in a number of countries and has created new adjustments in global energy policy. The subsequent large-scale geopolitical crisis sparked an

¹ **Apanovich M., Barabanov O.** et al. Climate Policy in a Global Risk Society. Report of the Valdai International Discussion Club. 2020. P. 14. (in Russ.)

² Paris Agreement. Adopted on 12.12.2015. <https://unfccc.int/resource/docs/2015/cop21/eng/l09r01.pdf>

³ **Simonova M.D., Zakharov V.E.** Statistical Analysis of Development Trends in Global Renewable Energy. MGIMO Review of International Relations. 2016; (3(48)). P. 214-220. (In Russ.) <https://doi.org/10.24833/2071-8160-2016-3-48-214-220>

“energy war” between the “collective West” and Russia, relegating the green agenda to a secondary position⁴. The energy crisis in European countries forces acceleration of greening processes in the energy sector through intensive development of RES to increase the level of energy independence of a number of countries.

It should be noted that RES currently account for more than 80% of new added capacities⁵. According to the report of the International Renewable Energy Agency, “World Energy Transitions Outlook 2022”, in order to achieve the goals of the Paris Agreement, global energy consumption must be reduced by 11% compared to 2019 levels through measures of improvement of energy efficiency while simultaneously increasing the share of RES in the global energy mix - up to 79% by 2050 from 19% in 2019. At the same time, the use of RES should be increased in all end-use sectors, including transport and construction⁶. In the last decades, the renewable energy technologies counter increases of the fossil energy prices; they act as a backstop of energy prices⁷. Renewable energy is seeing a truly explosive growth worldwide, especially with the diffusion of the “new renewables” in the form of photovoltaics and wind energy⁸. On the other hand, the rapid pace of development of renewable technologies creates preconditions for discrimination against fuel and energy complexes.

The importance of greening energy systems is also reflected in the UN Sustainable Development Program. The seventh goal of the program is to ensure access to affordable, reliable, sustainable and modern energy sources⁹. Sustainable development of energy systems, as well as other life spheres according to the UN sustainable development program, should include components of social, economic and environmental development. This means that the world must strive towards the goal of developing secure, affordable, clean energy systems through the introduction and considerable increase of new capabilities of RES. To limit temperature rise to less than 1.5°C over the century, the share of RES should reach 33-38% by 2030, and in the case of the electricity sector it should be 60-65%. In 2021, there was a record increase in renewable energy capacity in developing countries (+9.8% per year), with the total installation capacity reaching 268 Watt per capita¹⁰.

While an environmental focus in national energy policies to curb global warming is vital to mitigating the impact of climate change, a broad range of factors is much more important in shaping national energy strategies: the availability of energy sources, energy security, independence from energy supplies, energy equity, macroeconomic stability, geopolitical and geoeconomic shifts, technological progress, etc. Despite the importance of green transformation for energy systems and efforts of national governments to manage climate and environmental threats, the influence of non-environmental factors remains decisive in shaping the global energy development agenda.

⁴ **Rovinskaya T.** Global Climate Agenda: Big Gamble. *World Economy and International Relations*, 2023, vol. 67, no. 9, pp. 15-30. <https://doi.org/10.20542/0131-2227-2023-67-9-15-30>

⁵ *World Energy Trilemma Index 2021*. In partnership with Oliver Wyman. URL: <https://bityl.co/BG2s>

⁶ *World Energy Transitions Outlook 2022. 1.5°C Pathway*. IRENA. 2022.

⁷ **Krozer Y.** (2017), Energy markets: changes toward decarbonization and valorization. *Current Opinion in Chemical Engineering*. Volume 17. P. 61-67. <https://doi.org/10.1016/j.coche.2017.06.004>.

⁸ **Bardi U.** The grand challenge of the energy transition. *Front. Energy Res.* 2013. URL: <https://doi.org/10.3389/fenrg.2013.00002>

⁹ The 17 Goals. Department of Economic and Social Affairs Sustainable Development. URL: <https://sdgs.un.org/goals>

¹⁰ *The Energy Progress Report 2023: Tracking SDG7*. International Bank for Reconstruction and Development. The World Bank. 2023.

The problems and prospects for greening of energy systems in the EAEU states

The search for ways to solve the problem of global warming and the implementation of coordinated policies towards the greening of energy systems can't be effectively realized without international cooperation within the framework of various international structures, as well as forms of bilateral and multilateral cooperation. Integration associations like the European Union (EU), Association of South East Asian Nations (ASEAN), BRICS, Shanghai Cooperation Organization (SCO), Eurasian Economic Union (EAEU) and others get actively involved in greening processes.

The EAEU is the most ambitious regional integration project in the post-Soviet space since the collapse of the USSR. It differs from other regional organizations in the post-Soviet area in that it claims to be a supranational political structure similar to the European Union. It must be taken into account that the EAEU is still at the stage of formation and has many promising areas for its development. Accordingly, each participating state, due to its own characteristics, has its own vision of its development within the EAEU.

Integration of the energy systems of member countries is one of the priorities of the Eurasian integration process which leads to the implementation of a coordinated energy policy, the formation of common energy markets and the creation of a common electricity market among member states. The Treaty on the Eurasian Economic Union of May 29, 2014 notes that "in order to effectively use the potential of the fuel and energy complexes of the member states, as well as to provide national economies with the main types of energy resources (electricity, gas, oil and petroleum products), the participating states develop long-term mutually beneficial cooperation in the energy sector, pursue a coordinated energy policy, and carry out the gradual formation of common markets for energy resources, taking into account energy security...¹¹". Subsequently, on May 29, 2019, an agreement on the common electricity market of the EAEU was signed. In accordance with the approved action plan, the launch of the common electricity market is planned to be carried out no later than January 1, 2025. The common electricity market will increase the volume of mutual trade in electricity within the Union and will increase the level of energy security of member states, contributing to the sustainable development of their national economies.

The EAEU countries (Armenia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan and Russia) hold significant joint energy potential, providing almost 20% of global natural gas production, 15% of oil extraction, 7% of coal mining and ranking 4th in the world by electricity generation. It would seem that circumstances push the leaders of the EAEU countries to pursue development as brown economies rather than green ones. That holds true for Russia and Kazakhstan where mineral resources and petroleum products have become an irreplaceable source of national income¹². However, the green transformation of the global economy is an objective reality.

The development of "green" types of energy is considered a priority within the framework of Eurasian integration. It is stated in the "Strategic Directions for Developing the Eurasian Economic Integration until 2025", approved by Decision N12 of the Supreme Eurasian Economic Council on December 11, 2020. Particularly, the development of economic

¹¹ Treaty on the Eurasian Economic Union. Adopted May 29, 2014. URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95276>

¹² **Yurgens I., Romov R.** Enabling Green Integration and Building a Common Sustainable Development Space in the EAEU. Moscow. 2023. P.5.

հակառակորդին անսպասելի, հանկարծակի հարվածելու, խուճապի մատնելու, ուժերը ջլատելու հնարքներ: Թվարկածներից հետաքրքրական է «Որսորդ» կամ «Որսորդներն առաջ» գործողությունը, որը հակառակորդին թուլացնելու, հրամանատարական կազմից զրկելու, զորքից հեռացնելու նպատակով հատուկ մտածված հնարք էր. առանձնացվում էին դիպուկ կրակող ռազմիկներ՝ «որսորդների» խումբ, որոնք մարտը սկսվելուն պես «որսում էին» հրամանատարներին: Այդպիսով, Գ. Նժդեհը, հաշվի առնելով մարտական գործողությունների ժամանակ անմիջական ղեկավարներից զրկելու արդյունավետությունը, կիրառել է այս հատուկ գործողությունը: Արդյունքում, ահաբեկված հրամանատարները լքում էին իրենց զորամասերի անմիջական ղեկավարումը՝ դրանով թուլացնելով մարտունակությունը և ավելացնելով անորոշությունը: Հետաքրքրական է, որ տեղեկատվական պատերազմների մասնագետ Մարտին Լիբիկին իր «Ինչ է տեղեկատվական պատերազմը» (1995 թ.) գրքում առանձնացնում է «ղեկավար-կառավարական պատերազմի» (Command and Control Warfare) դերը, որի նպատակն է հարվածել ղեկավարող ուժերին, մեկուսացնել հրամանատարությունը հիմնական ուժերից¹¹: Սյունիքի մարտերում «Գայլի գործելակերպը» ապահովեց զգալի հաջողություններ: Թշնամու մեծաթիվ զորքերի դեմ անակնկալ գիշերային հարձակումները, Սյունիքի աշխարհագրական դիրքի ընձեռած հնարավորությունները և տեղանքին քաջածանոթ լինելու հանգամանքը, ինչպես նաև բարձր մարտական ոգին, ընդհանուր առմամբ, տալիս էին «բարոյական գերազանցություն» հակառակորդի քանակապես գերակշռող և տեխնիկապես հագեցած զորքերի նկատմամբ: «Ահա թե ինչու պիտի գործեինք թշնամու որակմամբ՝ որպես «հին գայլ»՝ հրաժարվելով ռազմավարության հին, շաբլոն, զանգվածային ձևերից»¹²: Այս գործողությունները թույլ էին տալիս խուճապի մատնել հակառակորդին, վերցնել տակտիկական աքցանի մեջ, պարտադրել մարտը անհարմար տեղանքում և հասնել հաջողության: Վերոնշյալ գործողություններն առանցքային դեր ունեցան Սյունիքի պաշտպանության և հակառակորդի գերակա զորքերի դեմ փոքրաթիվ զորքերով հաջողության հասնելու գործում:

Ստրատագեմների հիշարժան օրինակներ են կիրառվել 1991-1994 թթ. ռազմական գործողությունների ընթացքում: Շուշիի, Քարվաճառի, Սանասարի, Ադդամի ազատագրման ժամանակ հոգեբանական ազդեցության դասական տեխնոլոգիաներ են օգտագործվել, մասնավորապես՝

- կազմակերպել արագ գրոհ և հանկարծակիի բերել հակառակորդին այն հատվածներում, որտեղ հարվածի չի սպասում,
- շեղող գործողություններ իրականացնելով՝ ցույց տալ, որ դրությունը վտանգված է թիկունքում,
- բնակչության և զինուժի շարքերում խուճապ տարածել և օգտվել ստեղծված քառսից,

¹¹ St' u Libicki M., What is Information warfare, National Defence University, 1995, էջ 10-18:

¹² Գ. Նժդեհ, Երկեր, հատոր երկրորդ, Եր., 2002, էջ 21:

• պարտադրել փախուստ՝ տպավորություն ստեղծելով, թե շուտով շրջափակման մեջ կհայտնվեն:

Հատկանշական է, որ երբեմն թշնամին առանց մեծ հակազդեցության և մարտի բռնվելու լքել է Բարձունքներ, Բնակավայրեր, թողել է առատ ռազմամթերք և դիմել փախուստի: Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ս. Բաբայանը նշում է. «Նման մարտավարություն մենք կիրառել ենք բոլոր մյուս օպերացիաների ժամանակ: Մենք հնարավորության դեպքում խուսափել ենք դեմ առ դեմ մարտնչելուց և մեր մարտավարությունը կիրառել ենք այն ուղղությամբ հարվածելով, որտեղ հակառակորդը մեզ չի սպասում՝ մշտապես հասկացնել տալով, որ եթե հնարավորինս շուտ չլքի իր դիրքերը, կհայտնվի շրջափակման մեջ»¹³: Շուշիի և այլ վայրերի ազատագրական մարտերի ժամանակ կիրառված մարտավարության մասին ասում է. «Շուշին գրավել ենք ճիշտ մարտավարության շնորհիվ, ոչ միայն ուժային մեթոդով: Մեր խմբավորումներից որևէ մեկը Շուշի չի մտել ո՛չ դիմային, ո՛չ կողային ուղղություններով: Այս խմբավորումները միայն իրենց վրա հարված են ընդունել և դիմադրություն են ցուցաբերել տվյալ պահին: Բուն Շուշի քաղաքում մարտեր չեն ծավալվել»¹⁴: Քարվաճառի օպերացիայում վերոնշյալ մեթոդները ևս օգտագործվել են. փակվել են ռազմավարական նշանակության հաղորդակցման ուղիները, ջլատվել են հակառակորդի զորքերը, խուճապ է տարածվել բնակչության շրջանում, որին հաջորդել է մոտ 60,000 բնակչության տարահանումը Քարվաճառ-Բերձորի շրջաններից¹⁵:

Ակնայի ազատագրման համար կիրառվել է հետևյալ մոտեցումը՝ հայտնվել այնտեղ, որտեղ թշնամին չի սպասում, շեղել հակառակորդի ուշադրությունը ռազմական գործողությունների հիմնական ուղղություններից, արագ զորաշարժերով դիրքերը փոխել և հասնել առավելության, թույլ կողմերին հանկարծակի հարվածներ հասցնել փոքրաթիվ զորքերով, վատնել նվազագույն զինամթերք և տալ կենդանի ուժի քիչ կորուստ, գրավել ավտոճանապարհները և մայրուղիները, որից հետո համաձայնեցված համընդհանուր հարձակումներով հակառակորդին վերցնել օդակի մեջ՝ թողնելով միայն միջանցք խաղաղ բնակչության տարահանման համար, և մարտը հասցնել վերջնական հաղթական փուլի¹⁶:

Հնարքների և խորամանկ քայլերի իրականացման համար լայն հնարավորություն է ստեղծվում նաև հատուկ օպերացիաների ժամանակ: Նման գործողություններին բնորոշ են հատկապես անսպասելի և ստեղծագործական բնույթը, տեղեկատվությանը լիարժեք և բազմակողմանի տիրապետելու գործոնը, ինչպես

¹³ Хачатрян Г., Казарян Г., Маргарян С., Победы – как они были, Позывные 44, Ер., Армянская энциклопедия, 2009, с. 41.

¹⁴ Հեղինակի անձնական արխիվ, ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանի հետ հարցազրույցից, Եր., 15.02.2024:

¹⁵ Տե՛ս Хачатрян Г., Казарян Г., Маргарян С., նշվ. աշխ., էջ 94:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 109:

նաև հակառակորդի հակազդեցությունը կանխատեսող հեռատեսությունը:

1991 թ. ամռանը հայ-ադրբեջանական շփման գծում՝ Շամշադին-Թովուզ հատվածում, հակառակորդը որոշակի ուժեր էր կուտակել՝ համալրված Բաքվից ուղարկված օմոնականներով: Կար մտավախություն, որ վերջիններս կարող են հարձակումներ գործել կամ ոտնձգություններ իրականացնել, իսկ հայկական կողմում նրանց դիմակայելու ներուժ չկար, այդ իսկ պատճառով մշակվեց հատուկ գործողություն՝ նպատակ հետապնդելով թուլացնել կուտակված ուժերի հարձակման հավանականությունը: Ի նպաստ խնդրի լուծման՝ ի հայտ եկան ուղղորդված «բարերարներ» (Մառնեուլի թյուրքախոս բնակիչներ), ովքեր որոշեցին կազմակերպել ֆուտբոլի առաջնություն Գետաբակում (Կետաբեկ) և դրանում ներգրավել շրջանի բնակչությանը՝ բնականաբար ներառելով օմոնականներին: Այս նպատակով ձեռք բերվեցին նաև հեռուստացույցներ, տեսաձայնագրիչներ, նվերներ՝ հնարամտորեն շեղելով կուտակված ուժերի ուշադրությունը ֆուտբոլային մրցաշարով: Արդյունքում, տասնյակի հասնող գյուղերի բնակչությունը, ինչպես նաև Բաքվից ժամանած ուժերն ամբողջ ամառ ֆուտբոլ էին խաղում, և մինչև սեպտեմբեր ոչ մի հարձակում և ոտնձգություն չիրականացվեց հայկական բնակավայրերի ուղղությամբ¹⁷:

1992 թ. մարտին Իվանյանի ազատագրումից հետո, մշակվեց Փայտասարի (Օդունդադ) «գրավման» օպերացիան: Այս ուղղությամբ կազմակերպվեցին հետախուզական գործողություններ՝ թողնելով հատուկ հետքեր (օրինակ՝ հայկական արտադրության ծխուկներ) և բարձրացնելով արհեստական աղմուկ: Ադրբեջանցիների ուշադրությունը գրավելու նպատակով ստեղծվեցին այնպիսի պայմաններ, իբրև հայկական կողմը բարձունքներ գրավելու ցանկություն ունի: Տեղեկատվական տպավորիչ հենք ապահովելու համար բարձրաստիճան պաշտոնյա հրավիրվեց մոտակա հայկական գյուղեր՝ Բերքաբեր, Ոսկեպար, Բաղանիս, Բերդավան և այլ տեղեր՝ այցելություններ ու դիտարկում իրականացնելու նպատակով: Ի վերջո, հակառակորդը, վերլուծելով տիրող իրավիճակը, ուշադրությունը սևեռեց կարևոր բարձունքների պաշտպանության վրա՝ 1992 թ. ապրիլին այս ուղղության վրա կենտրոնացնելով 800-1000 մարտունակ զորք: Ինչպես հետագայում պարզ դարձավ, նմանատիպ օպերացիաներ մշակվել էին նաև Արծվաշենի, Մեղրիի և Կապանի ուղղությամբ: Իրականում սա հատուկ կազմակերպված հարձակման իմիտացիա էր, որը պետք է սկզբում գրավեր ուշադրություն, ստիպեր այլ վայրերից բերված ուժեր կենտրոնացնել տվյալ ուղղությամբ, որոնք մեծ հաշվով պետք է ապահովեին արդեն մայիս ամսին Շուշիի օպերացիան¹⁸:

Սկսած 2000-ական թթ.-ից Ադրբեջանը պետական մակարդակով սկսեց մեծ ուշադրություն դարձնել տեղեկատվական ոլորտի բարեփոխումներին, որը,

¹⁷ Տե՛ս Հեղինակի անձնական արխիվ, Հատուկ նշանակության խմբի հրամանատար Վլադիմիր Վարդանովի հետ հարցազրույցից, Եր., 20.02.2024:

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

բնականաբար, իր ուղիղ ազդեցությունը պետք է ունենար ռազմական ոլորտի վրա: Այսպես, 2010-2011 թթ. մշակված հատուկ գործողությունը ապացուցում է, թե ադրբեջանական կողմը որքան ուշադիր է հետևում տեղեկատվական միջավայրի անցուդարձերին: Քանի որ հայկական լրատվական դաշտը զգայուն է սահմանային միջադեպերի նկատմամբ և հաճախ բարձրաձայնում է դեպքերի մասին, իսկ Ադրբեջանը աչալքոքեն հետևում է, մշակվեց արհեստական տեղեկատվական արտահոսքով գործողություն, որը վերջնարդյունքում տասնյակի հասնող կենդանի ուժի կորուստներ պատճառեց թշնամուն: Այսպես, ադրբեջանական մեդիան Մատաղիսի հրամանատարի մասին սեփական անփութությամբ նյութեր էր հավաքել և, չհասկանալով, որ Մատաղիսի հրամանատարի և ինչ-որ հանցագործի, մանկապիղծի ազգանունը պարզապես համընկնում է, նույնացրել էր նրանց՝ սխալմամբ կարծելով, թե նույն անձն է: Ադրբեջանական մեդիան բարձրաձայնել էր այդ մասին՝ շահարկելով հրամանատարի բացասական կերպարը: Հայկական կողմը, հասկանալով հակառակորդի շփոթմունքը, օգտվում է առիթից և սկսում ավելի «բորբոքել կրքերը»: Այդ նպատակով կեղծ տեղեկատվությամբ արտահոսքեր են կազմակերպվում հայկական լրատվական դաշտում՝ իրականում գոյություն չունեցող այդ հրամանատարի մասին: Ընդ որում՝ Մատաղիսի ուղղությամբ եղած յուրաքանչյուր բացասական միջադեպ վերագրվում էր նույն «հրամանատարին»: Շուտով պարզ դարձավ, որ հակառակորդը, վերլուծելով Մատաղիսի ուղղությամբ առկա տեղեկատվությունը և հաշվի առնելով «բարձիթողի» վիճակը, եզրակացրել է, որ հարձակման դեպքում հաջողության հասնելու հավանականությունը մեծ է: Սպասված հարձակումը չուշացավ, սակայն Պաշտպանության բանակի հրամանատարությունը պատրաստ էր այդ քայլին, և հակառակորդը ընկավ լարված ծուղակը՝ կրելով կորուստներ: Հետաքրքրական է, որ թշնամու հարձակումը կրկնվում է երկրորդ անգամ, և տալով կենդանի ուժի տասնյակի հասնող կորուստներ՝ նա ետ է շարտվում ելման դիրքեր¹⁹: Այսպիսով, օպերացիան եկավ ապացուցելու, որ տեղեկատվական ոլորտի զարգացումը բերել է փոփոխություններ տեղեկատվության հավաքման, մշակման և կիրառման գործում: Պարզ դարձավ, որ հակառակորդն աչալքոքեն մշտադիտարկում է հայկական մեդիա տիրույթը, հնարավորինս շատ հավաքում է տվյալներ, համադրում է փաստերը և հետագայում դրանք գործածում ի նպաստ իր շահերի: Սակայն նույնիսկ հակառակորդի առավելության պայմաններում հնարավոր է դիմել խորամանկության և դիմացինի ունեցած առավելությունն օգտագործել ի նպաստ քեզ:

Ամփոփելով կարելի է փաստել, որ ստրատագեմային հմտություններին տիրապետելը և տեղին գործածելը ռազմական գործողություններում և տեղային նշանակության օպերացիաներում կարող են հսկայական նշանակություն

¹⁹ Տե՛ս Հեղինակի անձնական արխիվ, գ-տ Արծրուն Հովհաննիսյանի հետ հարցազրույցից, Եր., 21.02.2024:

ունենալ սեփական նպատակներին հասնելու, դիմացինի առավելությունը հոգուտ քեզ թեքելու և, բնականաբար, ռազմական գործողությունները հաջող իրականացնելու գործում:

Այսպիսով, հակառակորդի ուշադրությունը շեղող, անսպասելի հարձակման, քանակապես, երբեմն էլ տեխնիկապես գերակշռող ուժերին շրջափակման մեջ գցելու և խուճապի մատնելու գործողություններ բազմիցս կիրառվել են տարբեր ժամանակների հայկական ռազմարվեստում: Պատմությունը փաստում է, որ նշված ստրատագեմները հաճախակի գործածվել են և ապահովել գործողությունների հաջող ելքը: Ցավոք, մեր նկատմամբ ևս հակառակորդը կիրառել է ստրատագեմներ: 2020 թ. 44-օրյա պատերազմում ադրբեջանական կողմը ձեռնարկեց խորամանկ գործողություններ, որոնց արդյունքում առավելություն ստացավ օդային պայքարում: Մարտական գործողությունների առաջին օրերից Ադրբեջանը օդ բարձրացրեց տասնյակ ԱՆ-2 ինքնաթիռներ որպես խայծ: Հայկական հակաօդային պաշտպանության կողմից դրանք հայտնաբերվեցին և խոցվեցին, սակայն նախապես դիրքավորված գերժամանակակից անօդաչուները գաղտնագերծեցին հայկական ՀՕՊ համակարգերի տեղակայումը: Արդյունքում ադրբեջանական կողմին հայտնի դարձավ Արցախի պաշտպանության բանակի հակաօդային պաշտպանության որոշ համակարգերի տեղակայման վայրերը, որոնք և թիրախավորվեցին²⁰: Փաստորեն, ադրբեջանական կողմի ստրատագեմն ունեցավ առանցքային նշանակություն 44-օրյա ռազմական գործողությունների ելքի վրա:

Անհրաժեշտ է ամրագրել, որ ստրատագեմների առանձնահատկությունները, ռազմական ոլորտում գործածության հնարավորությունները, ինչպես նաև օտար երկրների կողմից ստրատագեմների կիրառման փորձը, այդ թվում՝ հակառակորդ երկրների կողմից Հայաստանի դեմ իրականացվածների օրինակները, համակարգված, գիտականորեն ուսումնասիրված չեն մեզանում, և հայկական գիտական միջավայրում ստրատագեմային հիմնախնդիրների հետազոտություններ չկան, այնինչ ոլորտի խորը և բազմակողմանի ուսումնասիրությունը, դրական ելքով արդյունավետ փորձի վերհանումը, մշակումը, համակարգումը կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար, ինչպես նաև կանխարգելող դեր ունենալ հայության դեմ ստրատագեմների գործածման չեզոքացման տեսանկյունից:

АЙК НАЗАРЯН – Опыт Армении в использовании стратагем (общий обзор). – Китайские, греческие и римские примеры применения стратагем известны с древнейших времён. Лидеры, особенно обладающие опытом в военном деле, прибегали к различным уловкам и хитростям для достижения своих целей. В армянском военном искусстве также существуют яркие примеры использования стратагем, которые давали возможность одерживать победу, несмотря на численное и техническое превосходство врага. Часто встречаются дей-

²⁰ Տե՛ս **Սյուխова Ք. Н.** Буря на Кавказе, Центр анализа стратегий и технологий, М., 2021, էջ 49:

ствия, отвлекающие внимание противника, внезапные удары, вызывающие панику и блокаду.

История военных операций 1991–1994 годов запомнилась такими стратегическими манёврами, как освобождение Шуши, Карвачара, Санасара и Акна. Подобные тактики сыграли ключевую роль в этих победах.

Владение стратагемическим мастерством и его грамотное применение в военных действиях и локальных операциях может стать решающим фактором для достижения целей, изменения баланса сил в свою пользу и, конечно, успешного ведения боевых действий. В этом контексте глубокое и всестороннее изучение военной стратегии, систематизация эффективного опыта и разработка успешных решений играют важнейшую роль для будущих побед и достижений.

Ключевые слова: *стратегема, военное искусство, трюк, уловка, дезинформация, спецоперации, манипуляция, соперник*

HAYK NAZARYAN – *Armenian Experience in the Usage of Stratagems (General Overview)*. – Chinese, Greek, and Roman examples of the use of stratagems are known from the history of the Ancient World. The leaders, especially those experienced in military fields, used various tricks to achieve their goal. There are well-known examples of the use of stratagems in the Armenian military art, the use of which is an opportunity to ensure success in achieving numerical and technical superiority over the enemy. We often encounter actions that distract the enemy's attention, make an unexpected attack and cause panic, blocking.

There are memorable examples of strategies from the history of military operations in 1991- 1994: similar technologies were used during the liberation of Shushi, Karvachar, Sanasar, Akna.

The possession of strategic skills and their proper use in military operations and operations of local importance can be of great importance for achieving your own goals, bending the advantage of another person in your favor and, of course, the successful conduct of military operations. In this sense, a deep and comprehensive study of the field, identification, development, systematization of effective experience with a positive result can be useful for future achievements.

Key words: *stratagem, art of war, trick, ruse, disinformation, special operations, manipulation, rival*

ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՑԱԼՆԵՐԸ

ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Արդի ժամանակաշրջանում կենսաբանական գործոնը վճռորոշ դերակատարում է ստանձնել անհատի, հասարակության և պետության գործունեության գրեթե բոլոր բնագավառներում: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների՝ ամեն տարի աշխարհում երկու միլիարդ մարդ հիվանդանում է վարակիչ հիվանդություններով, որոնցից 17 միլիոնը՝ մահացու ելքով: Մոլորակի բնակչության կեսը բնակվում է վարակիչ հիվանդությունների առումով էնդեմիկ տարածքներում կամ բնական օջախների սահմաններում: Զբոսաշրջության աճը, աշխատանքային միգրացիան, ապրանքաշրջանառությունը, ինչպես նաև օրեցօր ավելացող փախստականների հիմնախնդիրը նպաստում են վարակիչ հիվանդությունների տարածմանը և համաճարակների առաջացմանը, հատկապես այնպիսի երկրներում, որտեղ առողջապահական ենթակառուցվածքների մակարդակը ցածր է: 21-րդ դարը յուրահատուկ է իր գիտատեխնիկական առաջընթացի և վիրտուալացման գործընթացներով, որոնց բացասական կողմերը ի սկզբանե ակնառու էին: Լրջագույն վտանգներից է կենսաբանական ահաբեկչության և կենսաբանական ադետների աճը, ինչը լուրջ սպառնալիք է պետությունների, հասարակությունների և անհատների կայուն կենսագործունեության ու բնականոն զարգացման համար: Պետությունների մրցակցության ռազմական, քաղաքական, տնտեսական ոլորտներին ներկայումս ավելացել են նոր ուղղություններ, որոնք պայմանավորում են կենսանվտանգության տեղն ու դերը երկրի ազգային անվտանգության համակարգում: Հոդվածի հիմնական նպատակը կենսանվտանգության ապահովման ոլորտում ՀՀ պետական քաղաքականության առաջնահերթությունների, գերակա ուղղությունների և խնդիրների ուսումնասիրությունն է, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում էապես աճող կենսաբանական բնույթի սպառնալիքների և

* **Բագրատ Վարդանյան** – ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետ, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի հայցորդ

Багра́т Варда́нян – Ведущий специалист отдела внутреннего аудита аппарата Национального Собрания РА, соискатель кафедры политологии ЕГУ

Bagrat Vardanyan – Leading Specialist of the Internal Audit Department of the Staff of the National Assembly of the RA, Applicant at YSU Chair of Political Science

Էլ. փոստ՝ bagrat.vardanyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0003-4908-9731>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 06.09.2024

Գրախոսվել է՝ 28.10.2024

Հաստատվել է՝ 03.12.2024

© The Author(s) 2024

մարտահրավերների վերահսկումն ու կանխարգելումը: Վերոնշյալ նպատակների իրականացման մտադրությամբ անհրաժեշտ է **ներկայացնել** կենսանվտանգության էությունը և հասկացության սահմանումը, **ուսումնասիրել** կենսանվտանգության ապահովման միջազգային փորձը՝ քննելով դրանց կիրառության նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման գործընթացում, ինչպես նաև **դիտարկել** Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության ապահովման զարգացման հիմնախնդիրները:

Բանալի բառեր – *ազգային անվտանգություն, կենսաբանական անվտանգություն, կենսաբանական ահաբեկչություն, կառավարման կենտրոնացված համակարգ, վտանգավոր կենսաբանական գործոն, կենսաբանական զենք*

«Կենսաբանական անվտանգությունը» համեմատաբար նոր տերմին է, որի գոյություն ունեցող սահմանումների համար հիմք են ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» 1992 թ. հունիսի 5-ին ընդունված կոնվենցիան և ՄԱԿ-ի 2000 թ. հունվարի 29-ին ընդունված «Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիային վերաբերող «Կենսանվտանգության կարթագնյան արձանագրությունը»¹:

Կենսաբանական անվտանգությունը տարբեր ուսումնասիրողների կողմից սահմանվում է տարբեր կերպ, մասնավորապես հեղինակների մի մասը կենսաբանական անվտանգությունը դիտարկում է որպես գիտություն, որը միավորում է կենսաբանական վտանգավոր գործոններից մարդուն պաշտպանելու տեսությունը և պրակտիկան²:

Հեղինակների մյուս մասը կենսաբանական անվտանգությունը համարում է իրական և պոտենցիալ կենսաբանական սպառնալիքներից անձի, հասարակության և պետության պաշտպանվածությանը ուղղված կազմակերպչական և տեխնիկական միջոցառումների համակարգ³:

Առհասարակ «Կենսանվտանգություն» տերմինը փոխառվել է անգլալեզու գրականությունից: Այդ պատճառով տերմինաբանորեն «կենսանվտանգության» հայալեզու մեկնաբանության շրջանակներում կարելի է առանձնացնել երկու ուղղություն՝ «biosafety» և «biosecurity»⁴:

«Կենսաբանական անվտանգություն» (biosafety) տերմինը սահմանվում է որպես կենսատեխնոլոգիաներից, ինչպես նաև պաթոգեններից և կենսաբա-

¹ Ст'ю Жемчугов В. Биобезопасность - важное направление работы // Гражданская защита. 2008. № 10, էջ 34-35:

² Ст'ю Фуко М. Рождение биополитики // курс лекций, прочитанных в Коллеж де Франс в 1978-1979 учебном году. Санкт-Петербург, 2010:

³ Ст'ю Burduniuc O.S., Hamza H.A. biological risks and laboratory - acquired infections // Научные горизонты. 2020. № 10 (38), էջ 117-139:

⁴ Ст'ю Доброхотский О.Н. Оценка и управление биологическими рисками при работе с патогенными биологическими агентами// Биозащита и биобезопасность. 2010. Т. 2. № 3. էջ 18-22:

նական այլ գործոնների վնասակար ազդեցություններից մարդկանց պաշտպանվածության ապահովում: Այս տերմինը մասնավորապես օգտագործվում է պաթոգենության 1-4 խմբերի մանրէների հետ աշխատանքի դեպքում, անվտանգության պայմանների կանոնակարգման ժամանակ⁵:

«Կենսաբանական անվտանգություն» (biosecurity) տերմինը սահմանվում է որպես լաբորատորիաներում կենսաբանական ռեագենտների և տոքսինների պահպանության, վերահսկողության և հաշվառման ապահովում՝ դրանց կորստից, գողությունից, սխալ կամ անհարկի օգտագործումից, դիվերսիայից կամ միտումնավոր արտանետումից խուսափելու նպատակով⁶:

Անդրադառնալով կենսանվտանգության կառավարման հիմնախնդիրներին, կարող ենք նշել, որ կենսանվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության նպատակը երկրի ազգային և կենսական շահերի համար վտանգավոր կենսաբանական սպառնալիքների հայտնաբերման, ճանաչման, արձագանքման, կանխարգելման, ինչպես նաև դրանց բացասական ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների անցկացումն ու կատարելագործումն է⁷:

Կենսանվտանգության կառավարման արդի հիմնախնդիրները հասկանալու համար դիտարկենք մի քանի առաջատար երկրների մոդելները:

Համաձայն «Քիմիական և կենսաբանական անվտանգության ապահովման ոլորտում Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության հիմունքների մասին» ՌԴ նախագահի հրամանագրի՝ կենսանվտանգության ոլորտում ՌԴ պետական քաղաքականության գերակա ոլորտներն են.

1. Կենսաբանական սպառնալիքների գնահատում, դասակարգում, վերլուծություն և կանխատեսում:

2. Նորմատիվ իրավական կարգավորման և պետական կառավարման կատարելագործում:

3. Կենսաբանական սպառնալիքների չեզոքացմանը, կենսաբանական վտանգավոր գործոնների բացասական հետևանքների կանխմանը կամ նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության մակարդակի բարձրացմանը ուղղված միջոցառումների իրականացում⁸:

⁵ Տե՛ս **Кивачук А.А.** Биополитика и власть современных биотехнологий // Вестник Приднестровского университета. Серия: Гуманитарные науки. 2019. № 1-1 (61), էջ 172-177:

⁶ Տե՛ս **Hall C.M.** Biosecurity, tourism and mobility: institutional arrangements for managing tourism-related biological invasions // Journal of Policy Research in Tourism, Leisure and Events. 2011, 3, № 3, էջ 256-280:

⁷ Տե՛ս **Вюрмелинг Г.Б.** Основы европейской биополитики // В сборнике: Демократия в России и Европе: философское измерение. Материалы Международной конференции «Философские проблемы демократического общества». Под ред. В.Н. Брюшинкина. 2003, էջ 177-192:

⁸ Տե՛ս Указ Президента РФ от 11 марта 2019 г. № 97 "Об Основах государственной политики Российской Федерации в области обеспечения химической и биологической безопасности на период до 2025 года и дальнейшую перспективу" // <https://www.garant.ru/products/ipo/prime/doc/72092478/>

Համաձայն Կանադայի կառավարության կողմից հաստատված «Կանադայի կենսանվտանգության ուղեցույցի»՝ կենսանվտանգության ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներից է կենսաբանական ռիսկերի մոնիտորինգը, այն է՝ իրավիճակի համապարփակ վերլուծություն, կենսաբանական նոր սպառնալիքների բացահայտում և դրանց հնարավոր հետևանքների կանխատեսում, կենսաբանական սպառնալիքների դասակարգման ներդաշնակ համակարգի ներդրում և կիրառում՝ ըստ վտանգի մակարդակի, կենսաբանորեն վտանգավոր հաստատություններ ներառող տարածքներում ապրող բնակչության առողջական վիճակի մոնիտորինգ, նորաստեղծ ապրանքների համար անվտանգության գնահատման մեթոդների կատարելագործում՝ ներառյալ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների, սինթետիկ կենսաբանության և նանոտեխնոլոգիաների միջոցով ստացվածները, ինչպես նաև դրա՝ կենսաբանական վտանգ ներկայացնող օբյեկտների և տարածքների դասակարգում՝ հաշվի առնելով սպառնալիքի բնույթը, տվյալ տարածքում բնակչության թվաքանակը, շրջակա միջավայրից կախված հիվանդությունների մակարդակը և այլն: Արդի ժամանակաշրջանում չափազանց կարևոր են նաև բնակչության գենետիկական անձնագրավորումը և առհասարակ պետության գենետիկական պրոֆիլի ձևավորումը (գենոմի անձնագիրը ստեղծվում է մարդու կյանքում մեկ անգամ կատարվող գենետիկական հետազոտության հիման վրա: Այն հնարավորություն է տալիս նախապես տեղեկանալու տվյալ անձի գենոմում առկա մուտացիաների և դրանց հետևանքով որոշ հիվանդությունների նկատմամբ նախատրամադրվածության մասին)⁹:

Համաձայն ԱՄՆ կենսանվտանգության ազգային ռազմավարության դրույթների՝ կենսանվտանգության ոլորտում պետական քաղաքականության առանցքային խնդիրներից է նորմատիվ իրավական կարգավորման և պետական կառավարման կատարելագործումը, որը ենթադրում է օրենսդրության միջոցով կենսանվտանգության ապահովման ոլորտում ծագող հարաբերությունների կարգավորում, այդ թվում՝ «Կենսանվտանգության մասին» օրենքների նախապատրաստում և ընդունում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և պարտականությունների տարբերակում, միջազգային համագործակցության զարգացում, իրավական վերահսկողության ստանդարտների մշակում՝ պետական վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու, կենսաբանորեն վտանգավոր ձեռնարկությունների գործունեության նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու, ինչպես նաև կենսանվտանգության պահանջներին չհամապատասխանելու դեպքում պատասխանատվությունը խստացնելու նպատակով: Չափազանց կարևոր է նաև կենսանվտանգությունն ապահովող արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը խթանելու մեխանիզմների

⁹ St u The Canadian Biosafety Guideline, Government of Canada, September 2020:

մշակումը (օրինակ՝ արտոնյալ հարկում, ավելորդ արտանետումների համար վարչական պատասխանատվության բարձրացում, արտադրանքի սերտիֆիկացում և այլն) կամ կենսանվտանգությունն ապահովելու դեպքում արդյունաբերական ձեռնարկությունների համար բարենպաստ պայմանների ստեղծում (օրինակ՝ սուբսիդիաների կամ վարկերի տեսքով)¹⁰:

Ավստրալիայի կենսանվտանգության ազգային ռազմավարության մեջ սահմանված են կենսանվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության հետևյալ սկզբունքները.

1. Կենսանվտանգությունն ապահովելու ընթացքում մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանափակել այնքանով, որքանով դա անհրաժեշտ է այլոց առողջությունը, իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու և ազգային պաշտպանությունն ու պետական անվտանգությունը ապահովելու համար,

2. Կենսանվտանգության ապահովման ոլորտում պետության օրենսդրության կատարելագործում՝ հաշվի առնելով երկրի ազգային շահերը և միջազգային իրավունքի նորմերը,

3. Կենսանվտանգության բնագավառում պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների, անհատ ձեռնբեցների և իրավաբանական անձանց իրավունքների և պարտականությունների տարանջատում,

4. Պետական կարգավորման միջոցառումների համապատասխանություն կենսաբանական վտանգավոր գործոնների ազդեցության մակարդակին¹¹:

Ամփոփելով միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ ուսումնասիրված երկրները ունեն կենսանվտանգության ազգային ռազմավարություններ, որոնք ոլորտը կարգավորող գլխավոր հայեցակարգային փաստաթղթեր են: Վերը թվարկված բոլոր մոդելների դեպքում երկրները առաջնահերթությունը տալիս են նախ և առաջ կենսաբանական սպառնալիքների կանխատեսմանը և չեզոքացմանը, ապա նոր միայն հետևանքների վերացմանը կամ նվազեցմանը: Առանձնահատուկ կարևորվում է կենսաբանական ռիսկերի մոնիտորինգը, այն է՝ իրավիճակի համապարփակ վերլուծություն, նոր կենսաբանական սպառնալիքների բացահայտում և դրանց հնարավոր հետևանքների կանխատեսում, կենսաբանական սպառնալիքների դասակարգման ներդաշնակ համակարգի ներդրում և կիրառում: Ուսումնասիրված երկրները նաև հատուկ շեշտում են ոլորտի նորմատիվ իրավական կարգավորումը և պետական կառավարման կատարելագործումը, որը ներառում է օրենսդրության միջոցով կենսանվտանգության ապահովման ոլորտում ծագող

¹⁰ St' u National Biodefense Strategy of US, White House, 2018 // <https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2018/09/National-Biodefense-Strategy.pdf>

¹¹ St' u National Biosecurity Strategy of Australia, Department of Agriculture, Fisheries and Forestry, Canberra, August 2022 // <https://www.biosecurity.gov.au/sites/default/files/2022-08/National%20Biosecurity%20Strategy%28final%29.pdf>

հարաբերությունների կարգավորում: Առանձնակի կարևորվում է նաև բնակչության շրջանում կենսաբանորեն վտանգավոր օբյեկտների, կենսաբանական գործոնների բացասական հետևանքներից պաշտպանվելու մեթոդների, ինչպես նաև այդ հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Չափազանց հետաքրքրական է ամերիկյան մոդելը, որտեղ սահմանվել են կենսանվտանգությունն ապահովելու նպատակով արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը խթանելու և արդյունաբերական ձեռնարկությունների համար բարենպաստ պայմանների ստեղծման հստակ մեխանիզմներ: Հատկանշական է, որ եթե քննարկված բոլոր մոդելների դեպքում երկրները հիմնականում կենտրոնանում են կենսանվտանգության ապահովման մեխանիզմների կատարելագործման վրա, ապա Ավստրալիայի կենսանվտանգության ազգային ռազմավարության կարևորագույն սկզբունքներից է նաև կենսանվտանգությունն ապահովելու ընթացքում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Կենսանվտանգության կառավարման ներպետական հիմնախնդիրները հասկանալու և գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությունը: Կենսանվտանգության ապահովման գործընթացը կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում ներդրվել են իրավական մի շարք ակտեր, մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի «Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի 1540 բանաձևի իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային գործողությունների 2015-2020 թվականների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 95-Ա որոշում,

2) Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի նոյեմբերի 17-ի «Կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության ապահովման ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ 231-Ա կարգադրություն,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում կենսաբանական զենքի կոնվենցիայի դրույթների կիրառման ծրագրի միջոցառումների իրականացման 2017-2020 թվականների ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 7 արձանագրային որոշում,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «Սահմանի նշանակված անցման կետերում Հայաստանի Հանրապետությունում միջազգային առողջապահական կանոնների ներդրման և արտակարգ իրավիճակների ժամանակ գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 777-Ն որոշում,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի

փետրվարի 12-ի «Լարորատոր կենսանվտանգության, կենսապահովության, քիմիական և ճառագայթային անվտանգության համակարգին ներկայացվող ընդհանուր պահանջները հաստատելու մասին» N 108-Ն որոշում,

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի նիստի «Հատուկ վտանգավոր ախտածիններից պաշտպանության հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին ու ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 34 արձանագրային որոշում,

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 6-ի թիվ 822-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1785-Ն որոշումը և այլն:

2018 թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության կառավարման կենտրոնացված համակարգ ներդնելու, դրա նկարագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության կառավարման կենտրոնացված համակարգի ներդրման ծրագիրը հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին» որոշման նախագիծ: Դրա նպատակն է ձևավորել կենսանվտանգության կառավարման կենտրոնացված համակարգ՝ համաձայն միջազգային պահանջների, ներառյալ լաբորատոր կենսանվտանգությունը, կենսաբանական ռեսզենսների հետ աշխատող մարդկանց առողջության պահպանման, կենսատեխնոլոգիական հետազոտությունների կառավարման, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների անվտանգության, հիվանդների բժշկական օգնության և սպասարկման, կենսատեխնոլոգիայի, հիվանդությունների հսկողության և այլնի ենթահամակարգերը և միասնական պահանջները¹²:

Ոլորտը կարգավորող փաստաթուղթ է նաև 8 հոկտեմբերի 2018 թվականի Հայաստանի Հանրապետության վարչապետի N 1320-Ա որոշումը՝ կենսանվտանգության և կենսապահովության հարցերով աշխատանքային խումբ ստեղծելու, դրա կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին: Կենսանվտանգության և կենսապահովման հարցերով աշխատանքային խումբը ուսումնասիրում է ոլորտում առկա խնդիրները, առաջարկում է դրանց լուծման մեխանիզմները, ինչպես նաև քննարկում և ձևավորում է փոխհամաձայնեցված մոտեցում ընթացիկ ծրագրերի վերաբերյալ:

Աշխատանքային խմբի նպատակներն են Հայաստանի Հանրապետության

¹² Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշում, // <https://www.e-draft.am/en/projects/763/about>

կենսանվտանգության և կենսապահովման ոլորտում անվտանգության ապահովումը կատարելագործելը, առկա ռիսկերը գնահատելը, դրա հիման վրա հետագա գործողությունները նախանշելը, պլանավորելը և, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության վարչապետին զեկուցելը: Աշխատանքային խմբի գործունեությունը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարը¹³:

Անհրաժեշտ է ընդգծել նաև Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենքի կարևորությունը: Այդ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար¹⁴:

Այս համատեքստում թերևս ամենակարևորը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության 2020 թ. ռազմավարության մեջ կենսանվտանգությանը վերաբերող դրույթներն են, որտեղ ամրագրված են.

- Հայաստանի Հանրապետությունը կարևորում է անհատի, հասարակության, պետության կենսանվտանգության ապահովումը, ինչպես նաև կենդանական աշխարհի և շրջակա միջավայրի պաշտպանությունը կենսաբանական վտանգավոր գործոնների ազդեցությունից:

- Բնակչության կենսաբանական անվտանգությունն ապահովելու նպատակով Հայաստանն իրականացնելու է միասնական պետական քաղաքականություն: Հայաստանը ամրապնդելու է կենսաբանական վտանգների ու սպառնալիքների կանխարգելման, համաճարակների դեմ պայքարի, ռիսկերի կառավարման ու արձագանքման գործողությունների համակարգային կառավարման մեխանիզմները, ինչպես նաև զարգացնելու ենք ռեֆերենս լաբորատորիաների և անձնակազմերի մասնագիտական կարողությունները:

- Հայաստանը շարունակելու է միջազգային համագործակցությունը կենսանվտանգության և կենսապահովման ոլորտում ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով՝ շեշտը դնելով գործընկերային հավասար և համաչափ հարաբերությունների զարգացման վրա և ամրապնդելով ոլորտում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը:

¹³ Տե՛ս ՀՀ վարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 8-ի N 1320-Ս որոշում, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=96756&fbclid=IwAR1KSPPPrCyCQ5VtrXqrJcnefIOQBnSsXX4O9tGYt5x1npnq342fAOflUis>

¹⁴ Տե՛ս ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենք // <https://www.arlis.am/documentview.aspx?docID=29774>

- Հայաստանը կատարելագործելու է զանգվածային ոչնչացման՝ միջուկային, քիմիական և կենսաբանական զենքի մշակման, տարածման և կիրառման կանխարգելման իր կարողությունները:

- Հայաստանը հզորացնելու է իր կարողությունները ճառագայթային, քիմիական և կենսաբանական գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների կանխարգելման և այդ իրավիճակներին հակազդելու ուղղություններով:

- Շրջակա միջավայրի անվտանգության ապահովման նպատակով Հայաստանը կատարելագործելու է ռադիոակտիվ, քիմիական և կենսաբանական վտանգավոր թափոնների կառավարման համակարգը, ստեղծելու ենք քիմիական նյութերի անվտանգ կառավարման համակարգ¹⁵:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունը նույնպես առաջնահերթությունը տալիս է կենսաբանական ռիսկերի կառավարմանը, սպառնալիքների կանխատեսմանը և չեզոքացմանը, առանձնակի կարևորվում է նաև միջազգային համագործակցությունը կենսանվտանգության և կենսաապահովման ոլորտում ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Մակայն Հայաստանի Հանրապետությունում, ի տարբերություն վերը ուսումնասիրված երկրների, դեռևս սահմանված չեն կենսանվտանգության ապահովման գործընթացի հստակ մեխանիզմներ: Չնայած ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտերի առկայությանը՝ այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության ապահովման գործընթացը ինստիտուցիոնալ առումով դեռևս չի կայացել: Այս պնդումը հիմնավորվում է հատկապես այն հանգամանքով, որ, ի տարբերություն վերը ուսումնասիրված երկրների, Հայաստանը մինչ այժմ չունի կենսանվտանգության ապահովման ազգային ռազմավարություն, որից պետք է բխեն ոլորտը կարգավորող օրենքները և նորմատիվ իրավական ակտերը: Հայեցակարգի բացակայությունը փաստացի հանգեցրել է նրան, որ լոկալ իրավական ակտերի միջոցով կենսանվտանգության համակարգի որոշ բաղադրիչների աշխատանքը գուցե թե կարգավորվել է, սակայն դա վճռական ազդեցություն չի ունենում համակարգի ամբողջական ձևավորման և կայացման հարցում: Մասնավորապես, այդպես էլ բաց է մնում ոլորտի համար պատասխանատու հանդիսացող պետական մարմնի հարցը: Որոշակի իմաստով դրական տեղաշարժ կարելի է համարել այն փաստը, որ կենսանվտանգության ապահովման վերաբերյալ մի քանի դրույթներ ամրագրվել են 2020 թվականին ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում, հաշվի առնելով այն, որ նախորդ՝ 2007 թվականի փաստաթղթում կենսանվտանգության վերաբերյալ որևէ հիշատակում առկա չէ:

¹⁵ Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 7-րդ գլուխ, 7.44, 7.46, 7.47, 7.48 կետեր, էջեր 37-38 // https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

Ի հավելումն վերոգրյալի՝ կարող ենք նշել, որ Հայաստանի Հանրապետության կենսաբանական կրիտիկական ենթակառուցվածքները հիմնականում կառավարում է մասնավոր հատվածը: Ուստի կենսավտանգության ապահովումն արդյունավետ կարող է իրականացվել պետություն-մասնավոր հատված կառուցողական համագործակցության և համատեղ մեխանիզմների մշակման և կիրառման միջոցով: Նկատի ունենալով արտաքին և ներքին դերակատարների շահերի տարաբնույթ դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում՝ անհրաժեշտություն կա (հիմնվելով բոլոր խաղացողների երկարատև շահերի, ինչպես նաև ռազմավարական կայունության անհրաժեշտության վրա) զարգացնել համագործակցության մշակույթ:

БАГРАТ ВАРДАНИЯН – Предпосылки формирования государственной политики Республики Армения в области биобезопасности. – В современную эпоху биологический фактор приобрел решающую роль практически во всех сферах деятельности личности, общества, государства и нации. XXI век уникален своим научно-техническим прогрессом и процессами виртуализации, которые изначально отличались своими негативными сторонами. Одной из наиболее серьезных угроз является рост биологического терроризма и биологических катастроф, что представляет собой серьезную угрозу стабильному функционированию и нормальному развитию государств, обществ и личности. В военно-политическую и экономическую сферы государственной конкуренции добавились новые направления, определяющие место и роль системы биобезопасности в контексте национальной безопасности страны. Основная цель статьи - исследование приоритетов, приоритетных направлений и проблем государственной политики РА в сфере обеспечения биобезопасности, а также контроль и предотвращение угроз и вызовов биологического характера, которые значительно возрастают в результате научно-технического прогресса. Для достижения поставленных целей необходимо представить сущность биобезопасности и определить понятие, изучить международный опыт обеспечения биобезопасности, исследуя целесообразность их применения в процессе обеспечения биобезопасности Республики Армения, а также рассмотреть вопросы развития биобезопасности в Республике Армения. По данным Всемирной организации здравоохранения (ВОЗ), ежегодно два миллиарда человек в мире заболевают инфекционными заболеваниями, из них 17 миллионов умирают. Половина населения мира проживает в районах, эндемичных по инфекционным заболеваниям, или в зонах природных вспышек. Рост туризма, трудовой миграции, товарооборота, а также постоянно растущая проблема беженцев способствуют распространению инфекционных заболеваний и возникновению эпидемий, особенно в странах, где уровень инфраструктуры здравоохранения низкий.

Ключевые слова: национальная безопасность, биологическая безопасность, биологический терроризм, централизованная система управления, опасный биологический фактор, биологическое оружие

BAGRAT VARDANYAN – The Prerequisites for Establishing the Republic of Armenia State Policy in the Field of Biosecurity. – In the modern era, the biological factor has assumed a crucial role in almost all spheres of activity of the individual, society, state and nation. The 21st century is unique in its scientific and technical progress and virtualization processes, which were initially notable for their negative aspects. One of the most serious threats is the growth of biological terrorism and biological disasters, which pose a serious threat to the stable functioning and normal development of states, societies and individuals. New directions have been added to the military-

political and economic spheres of state competition, defining the place and role of the biosecurity system in the context of the country's national security. The main objective of the article is to study the priorities, priority areas and problems of the state policy of the Republic of Armenia in the field of biosafety, as well as control and prevention of biological threats and challenges, which are significantly increasing as a result of scientific and technological progress. To achieve the set goals, it is necessary to present the essence of biosafety and define the concept, to study international experience in ensuring biosafety, investigating the feasibility of their application in the process of ensuring biosafety in the Republic of Armenia, and also to consider issues of biosafety development in the Republic of Armenia. According to the World Health Organization (WHO), every year two billion people worldwide become ill with infectious diseases, of which 17 million die. Half of the world's population lives in areas endemic for infectious diseases or within natural foci. The growth of tourism, labor migration, trade turnover, as well as the ever-growing refugee problem contribute to the spread of infectious diseases and the emergence of epidemics, especially in countries where the level of health infrastructure is low.

Key words: *national security, biological security, biological terrorism, centralized control system, dangerous biological factor, biological weapon*

Գևորգ Ղուկասյան, Եվրոպայի հայկական լոբբին. Էթնիկ լոբբինգի էությունը և գործառնման համատեքստը, Եր., 2024, 200 էջ

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հայաստանի անկախացումից հետո, հայրենիք-սփյուռք հարաբերությունների շարունակական կերպափոխմամբ պայմանավորված, անհրաժեշտություն էր առաջացել վերաբժնորելու էթնիկ լոբբինգի գործունեության արժեքաբանությունը՝ դիտարկելով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման հնարավոր դերակատարությունը, ինչը թույլ կտա Եվրոպայի հայկական սփյուռքին նաև անդրադառնալ Եվրոպայում հայկական լոբբիի իրավաքաղաքական գործունեությունը լեգիտիմ և լեգալ կազմակերպելու մարտահրավերին:

Ցանցային կառավարման առանձնահատկություններով, միգրացիոն անկառավարելի հոսքերով և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց աճով ուղեկցվող միջազգային հարաբերությունների ներկա տուրբուլենտության պայմաններում միանգամայն արդիական է սփյուռքի և հատկապես հայկական սփյուռքի քաղաքական դերի ուսումնասիրությունը: Պայմանավորված գլոբալ, գլոկալ և լոկալ քաղաքական դրսևորումներով՝ հետաքրքիր է արժևորել սփյուռքի տեղն ու դերը գլոբալ կառավարման համակարգում՝ որպես անդրազգային քաղաքական դերակատարի: Որպես այդպիսին՝ սփյուռքը, բազմաչափ հարաբերությունների մեջ մտնելով իր պատմական հայրենիքի և պետության, ինչպես նաև ընդունող պետության հետ, ինքնադրսևորվում և ինքնիրացվում է՝ ստանձնելով համայնքային, էթնոպաշտպան և քաղաքական համագործակցության պատասխանատվություն: Սփյուռքյան էթնիկ լոբբիստական կազմակերպությունների ստեղծումը, ի թիվս

* **Գեղամ Պետրոսյան** – պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս

Герам Петросян – доктор исторических наук, профессор кафедры международных отношений и дипломатии ЕГУ, профессор-эмерит ЕГУ

Gegham Petrosyan – Doctor of Historical Sciences, Professor at YSU Chair of International Relations and Diplomacy, YSU Professor Emeritus

Էլ. փոստ՝ gegham.petrosyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0002-1603-8383>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 28.10.2024

Հաստատվել է՝ 03.12.2024

© The Author(s) 2024

այլնի, առաջնային նպատակ է հետապնդում մասնակցելու հայրենի պետության/ժողովրդի կյանքի կառավարմանը և միաժամանակ համագործակցելու ընդունող պետության հետ՝ որպես այդ պետության քաղաքացիական մշակույթի կրող: Ուստի միջազգային հարաբերություններում սփյուռքի, մասնավորապես դրա քաղաքական գործունեության հիմնական գործառնողի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ դերակատարման համակարգված բացահայտումը խիստ կարևոր առաջադրանք է:

«Էթնիկ լոբբինգը՝ որպես քաղաքական գործընթացի դերակատար» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում բացահայտվում է էթնիկ լոբբինգի ինստիտուտի էությունը, դրա անդրազգային քաղաքական դերակատարությունը, սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը: Էթնիկ լոբբինգը դիտարկվում է որպես առհասարակ քաղաքական արդիականացման և մասնավորապես ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման գործառնող:

«Հայկական էթնիկ լոբբինգը Եվրոպական միության անդամ երկրներում» խորագրով երկրորդ գլուխը նույնպես բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում Գ. Ղուկասյանը ներկայացնում է Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրն ու քաղաքական աշխարհագրությունը, բացահայտում է Եվրոպայի հայկական լոբբիի քաղաքական գործունեության առաջնահերթությունները, գնահատում է էթնիկ լոբբինգի կողմից «փափուկ ուժի» կիրառելիության հնարավորությունները, վերլուծում է ՀՀ-ԵՄ հարաբերությունների քաղաքական զարգացման գործընթացում Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ԵՄ քաղաքական վարքը:

«Եվրոպայի հայկական լոբբիի գործունեության քաղաքական, ինստիտուցիոնալ և օրենսդրաիրավական հնարավորությունները» խորագիրը կրող երրորդ գլուխը՝ իր երեք ենթագլուխներով, հեղինակը նվիրել է էթնիկ լոբբինգի գործունեության երաշխավորման գործում բազմամշակութայնության դերի բացահայտմանը, Եվրոպական միության անդամ պետություններում լոբբինգի ինստիտուտի գործունեության իրավական հիմքերի վերլուծությանը և ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում Եվրոպայի հայկական լոբբիի դերակատարությանը:

Հեղինակն օգտագործել է բավականին արժեքավոր գրականություն, որոնցից մի քանիսը առաջին անգամ են բերվել հայրենական ակադեմիական հետազոտության տիրույթ:

Աշխատանքի հիմնական նպատակներն են արդի միջազգային հարաբերությունների կառուցվածքում հայկական էթնիկ լոբբինգի քաղաքական դերակատարման համակողմանի քննությունը, ժամանակակից սփյուռքի և հատկապես հայկական սփյուռքի քաղաքագիտական ուսումնասիրությունը, էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային քաղաքական դերակատարության, Եվ-

րոպայի հայկական լոբբիի կառուցվածքագործառնական հնարավորությունների վերհանումը, գործունեության առանձնահատկությունների և լոբբիստական սուբյեկտների նույնականացումը և ՀՀ-ԵՄ հարաբերություններում դերակատարության հնարավորության գնահատումը:

Իր առջև դրված նպատակների կատարմանը հեղինակը հասել է այնպիսի խնդիրների առաջադրմամբ, ինչպիսիք են Էթնիկ լոբբինգի հիմնավորումը որպես քաղաքական գործընթացի ինստիտուցիոնալ դրսևորում և անդրազգային քաղաքական դերակատար, Էթնիկ լոբբինգի ինստիտուտի դերակատարության գնահատումը քաղաքական արդիականացման գործընթացում և վերջինիս հնարավորությունների դիտարկումը իբրև «փափուկ ուժի» գործառնող: Հեղինակը բացահայտել է բազմամշակութայնության արժեհամակարգային պայմաններում Էթնիկ լոբբինգի դրսևորման հնարավորությունները, հատկորոշել է հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն «եռանկյունու» փոխգործակցության և փոխազդեցության շղթայի բոլոր օղակների առանձնահատկությունները, բացահայտել է Էթնիկ լոբբինգի ներեվրոպական ընկալումը, գնահատել է լոբբինգի և դրա տարատեսակ Էթնիկ լոբբինգի ինստիտուցիոնալ և օրենսդրաիրավական հնարավորություններ համաեվրոպական մակարդակում և այլն:

Կատարվել է ծավալուն ակադեմիական աշխատանք՝ հայկական սփյուռքի քաղաքական գործունեության և հնարավորությունների քաղաքագիտական գնահատման տեսանկյունից, ինչի անհրաժեշտությունը վաղուց արդեն հասունացել էր:

Միգրացիոն ներկա անկառավարելի հոսքերի և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց աճի պայմաններում վաղուց անհրաժեշտություն էր առաջացել ուսումնասիրելու հայկական սփյուռքի տեղն ու դերը գլոբալ կառավարման համակարգում՝ որպես անդրազգային քաղաքական դերակատարի: Նկատենք, որ Գ. Ղուկասյանի կողմից Էթնիկ լոբբինգի ինստիտուտը իրավացիորեն բնորոշվել է որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող:

Ներկայացված աշխատությունն արդիական է նաև ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների արդյունավետ զարգացման, Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի ռացիոնալացման, ինչպես նաև հայկական Էթնիկ լոբբինգի գործունեության վերարժևորման ու հետագա զարգացման առումով: Այն հայ իրականության մեջ թերևս եզակի նախաձեռնություն է՝ համակարգված ուսումնասիրելու Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունների զարգացման դերակատար այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ԵՄ-ում տեղի են ունենում քաղաքական նոր զարգացումներ, որոնք ուղղակի ազդեցություն ունեն Հարավային Կովկասի վրա:

Հեղինակին հաջողվել է հատկորոշել Էթնիկ լոբբինգի կառուցվածքագործառնական, արժեքաբանական և վարքաբանական առանձնահատկություն-

ները, բացահայտել և համակարգված ներկայացնել հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն եռանկյունու բոլոր կողմերի փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները, ինչպես նաև էթնիկ լոբբինգի արդի անդրազգային քաղաքական դերակատարումը: Գ. Ղուկասյանը քննության է առել Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրը, Եվրոպայի հայկական լոբբիի կառուցվածքը, քաղաքական առաջնահերթությունները, գործունեության հիմնական ուղղությունները:

Առանձնապես արժեքավոր է սփյուռքի բազմամշակութայնության էությունն ու բնույթին նվիրված համակարգված տեսամեթոդաբանական վերլուծությունը, որի արդյունքում հեղինակը հանգել է կարևոր արձանագրումների՝ բազմամշակութայնության ընձեռած հնարավորությունների միջոցով էթնիկ լոբբինգի գործունեության երաշխավորման համատեքստում:

Ինչպես արդեն նշվեց, Գ. Ղուկասյանի աշխատանքի կարևոր արձանագրումներից մեկն այն է, որ էթնիկ լոբբինգի ինստիտուտը դիտարկվել է որպես անդրազգային քաղաքական դերակատար և սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող: Առկա ակադեմիական ուսումնասիրություններում սփյուռքն առավելապես դիտարկվել է էթնոմշակութային և սոցիալ-մշակութային ասպեկտներով: Էթնիկ լոբբինգի իբրև քաղաքագիտական ֆենոմենի համակարգային ուսումնասիրությունը որոշակիորեն անտեսվել է, և հայկական իրականությունում նման հետազոտությունների ակադեմիական անհրաժեշտություն էր առաջացել:

Գ. Ղուկասյանի աշխատությունն ունի գիտական և կիրառական արժեք, գրված է գիտական և գրագետ լեզվով, ունի գիտավերլուծական բնույթ, հետազոտվող նյութը փաստարկված է: Օգտագործված հսկայածավալ գրականության և համապատասխան փաստաթղթերի վերլուծությամբ հեղինակին հաջողվել է միանգամայն նորովի և համակարգային վերլուծության ենթարկել Եվրոպայի հայկական էթնիկ լոբբինգին վերաբերող հիմնահարցերը: Ուստի, քաղաքական գիտությունների թեկնածու Գևորգ Մարտիկի Ղուկասյանի «Եվրոպայի հայկական լոբբին. էթնիկ լոբբինգի էությունը և գործառնման համատեքստը» աշխատությունը արժանի է ակադեմիական շրջանակների ուշադրությանը, իսկ դրանում առաջ քաշված դրույթները լրացուցիչ քննարկումների, փորձարկումների և ուսումնական գործընթացում ներառման:

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Շալք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Hovakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Асмик Есаян
Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 03. 12. 2024: